# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԹ. ՏԱՐԻ ԹԻՒ 46 (1446) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19, 2009
VOLUME 29, NO. 46 (1446) SATURDAY, DECEMBER 19, 2009

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՍԴՀԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Վերջին ամիսներուն Հայաստանի Հնչակեան կառոյցէն ներս տեղի ունեցող վերիվայրումներուն վերջ դնելու նպատակաւ, մասնաճիւղերու վարչութիւնները անվստահութիւն յայտնելէ ետք իրենց ատենապետին, հրաւիրեցին արտակարգ 7-րդ Համագումար, որ կայացաւ Զորեքշաբթի, Դեկտեմբեր 16-ին Ծաղկաձորի մէջ:

Համագումարի ընթացքին որոշուեցաւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան շարքերէն արտաքսել Հայաստանի նախկին ատենապետ Լիւսմիլա Սարգսեանը եւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ Գուրգէն Եղիազարեանը:

Ընտրուեցաւ Հայաստանի նոր վարչութիւն, ատենապետութեամբ Ընկ. Գէորգ Պէրկուպեկեանի:

Համագումարը որոշեց հաւատարիմ մնալ վերջերս կայացած Հնչակեան 19-րդ ընդհանուր համագումարի որոշումներուն ու շարունակել գործել ընդդիմադիր դաշտի վրայ, Հայաստանի մէջ վերահաստատելու համար ժողովրդավարութիւնը, օրինականութիւնը եւ սահմանադրական կարգը:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՉԵՂԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐԵԼ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան սպառնաց չեղեալ յայտարարել հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացումը, եթէ Թուրքիա շարունակէ Լեռնային Ղարաբաղի հարցը կապել Արձանագրութիւններուն: Սարգսեան յայտնեց, որ այդ փորձերը դատապարտուած են ձախողութեան եւ Հայաստանի կառավարութիւնը շարունակելով հանդերձ վաւերացման գործընթացը, կը նախապատրաստուի նաեւ արձանագրութիւնները չեղեալ յայտարարելու կարելիութեան:

«Մենք միանշանակ դատապարտուած ենք համարում Թուրքիայի կողմից այն փորձերը, որ արւում են: Գիտէք, այդ փորձերը վերաբերում են Լեռնային Ղարաբաղի խնդրին, եւ Թուրքիայի նպատակն է հայ-թուրքական յարաբերութիւնները փոխշաղկապել Լեռնային Ղարաբաղի խնդրին: Մէկ անգամ եւս պէտք է կրկնեմ, որ այդ փորձերը դատապարտուած են ձախողման», - Լատվիայի նախագահ Վալդիս Զատլերսի անցեալ շաբթուայ ընթացքին Հայաստան կատարած այցելութեան առթիւ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի ընթացքին:

Սերժ Սարգսեան իր այս կեցուածքով կը պատասխանէր Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրտողանի վերջերս Ուաշինկթընի մէջ կատարած այն յայտարարութիններուն, թէ թրքական խորհրդարանէն ներս Արձանագրութիւններու վաւերացումը ապահովելու պայման է Լեռնային Ղարաբաղի հարցով որոշ յառաջխաղացք:

Յիշեցնելով, որ հայկական կողմը կը շարունակէ քայլեր ձեռնարկել արձանագրութիւններու վաւերացման ուղղութեամբ եւ Յունուար 12-ին կը սպասուի Հայաստանի Սահմանադրական Դատարանը որոշումը՝ հայ-թրքական արձանագրութիւններու սահմանադրականութեան վերաբերեալ, Սերժ Սարգսեանը շեշտեց, որ Արձանագրութիւններու վաւերացման ձգձգումը կրնայ խոչընդոտներ ստեղծել. - «Ուղղակի բոլորը պէտք է հասկանան, որ ինչքան ձգձգւում է վաւերացման պրոցէսը, այնքան աւելանում են խոչընդոտները: Քաղաքական իրադարձութիւնները հետագայում կարող են խոչընդոտ լինել»:

«Ես հիմա էլ յայտարարում եմ, որ Հայաստանի Հանրապետութիւնը պատրաստ է պատշաճօրէն կատարելու իր միջազգային պարտաւորութիւնները, այն է՝ վաւերացնելու հայ-թուրքական արձանագրութիւնները: Բայց յիշում էք՝ ես նաեւ յայտարարել եմ, որ եթէ Թուրքիան ձգձգի արձանագրութիւնների վաւերացումը, ապա Հայաստանը անյապաղ կ՚օգտուի միջազգային իրաւունքից բխող հնարաւորութիւններից», - յայտարարեց Սարգսեան եւ զգուշացուց. - «Ես յանձնարարել եմ համապատասխան պետական մարմիններին, որպէսզի նրանք նախապատրաստեն լրացումներ մեր օրէնսդրութեան այն մասով, որը առնչւում է միջազգային պայմանագրերի ստորագրմանը, վաւերացմանը եւ չեղեալ յայտարարելուն»:

## «ՀԻՒՐՐԻՅԷԹ» ԹԵՐԹԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼ ԿՐՆԱՅ ՁԻՋԻԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՄԷԿ ՄԱՍԸ

Թրքական «Հիւրրիյէթ» թերթէ կը տեղեկացնէ որ, Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի եւ Թուրքիոյ վարչապետ Ռէջէփ Թայիփ Էրտողանի միջեւ Դեկտեմբեր 7-ին կայացած հանդիպման ժամանակ, Օպամա ըսած է, որ մինչեւ յառաջիկայ Ապրիլ հայ-թրքական արձանագրութիւնները պէտք է վաւերացուին Թուրքիոյ խորհրդարանի կողմէ: Թերթը կ՚աւելցնէ որ, ի պատասխան Օպամայի այս խօսքերուն, Էրտողան խնդրած է օգնել ղարաբաղեան տագնապի լուծման գործընթացին:

Հիմնուելով դիւանագիտական աղբիւրներու վրայ «Հիւրրիյէթ» կը գրէ, որ Միացեալ Նահանգները մինչեւ յաջորդ տարուայ Ապրիլ հաւանական է հասնի այն բանին, որ հայկական կողմը որոշ տարածքներ զիջի Ատրպէյճանին: Նոյն աղբիւրներու համաձայն, Օպամա խոստացած է ուժեղացնել ԵԱՀԿ Մինսկի խումբի աշխատանքները:

## ԱՆԳԼԻՈՅ ԼՈՐՏԵՐՈՒ ՊԱԼԱՏԷՆ ՆԵՐՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Անգլիայի Լորտերու Պալատէն ներս Ջէֆրի Ռոպըրթսըն ներկայացուցած է «Իրաւական կարծիք» կարծիք խորագրով զեկոյց՝ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ, ուր ցոյց կը տրուի, թէ ինչպէս են Մեծն Բրիտանիոյ նախարարները, Խորհրդարանի անդամները եւ ժողովուրդը մոլորութեան մատնուած են Բրիտանական կառավարութեան կողմէ:

Մեծ Բրիտանիոյ մօտ Հայաստանի դեսպան Վահէ Գաբրիէլեան զեկոյցի ներկայացման ժամանակ շեշտած է անոր կարեւորութիւնը, որ կ՚ապացուցէ Բրիտանական կառավարութեան՝ ցեղասպանութիւնը ճանչնալու ցանկութեան բացակայութիւնը, ոչ թէ փաստերու բացակայութեան, այլ քաղաքականօրէն աննպաստ ըլլալուն պատճառով: Դեսպանը յայտնած է որ, Հայաստանի կառավարութիւնը հակառակ որ զբաղած է Թուրքիոյ հետ յարաբերութիւնները բարելաւելու գործով, այնուհանդերձ չի պատրաստուիր զոհաբերել Հայոց Ցեղասպանութեան հարցը:

Բրիտանիա-հայկական խորհրդարանական խումբը կը տեղեկացնէ որ, զեկոյցը, որուն վերնագիրն է «Եղա՞ծ է Հայերու Ցեղասպանութիւն», ուղարկուած է Բրիտանական խորհրդարան, տարբեր դիւանագէտներու, պատմաբաններու, գիտնականներու եւ լրատուամիջոցներու: 40 մեծ իրաւաբաններէն, որոնք ստացած են զեկոյցը, ոչ ոք կասկած չէ յայտնած ներկայացուած ուսումնասիրութեան մասին:

## ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՑԱԾ Է ՕՊԱՄԱ - ԷՐՏՈՂԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Պետական Քարտուղար Հիլըրի Քլինթըն

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան հեռախօսազրոյց ունեցած է Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Քլինթընի հետ՝ այս վերջինի նախաձեռնութեամբ:

Հայաստանի Նախագահի պաշտօնական կայքէջին վրայ տեղադրուած հաղորդագրութեան համաձայն՝ Հիլըրի Քլինթըն Սերժ Սարգսեանին տեղեկացուցած է նախագահ Պարաք Օպամայի եւ Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Էրտողանի՝ Ուաշինկթընի մէջ կայացած հանդիպման մանրամասնութիւններու մասին:

Զրոյցի ընթացքին Քլինթըն անգամ մը եւս շեշտած է, որ Միացեալ Նահանգները պիտի շարունակէ հետեւողական աջակցութիւնը Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու՝ առանց նախապայմաններու եւ շուտափոյթ կարգաւորման ուղղութեամբ:

Սերժ Սարգսեան Հիլըրի Քլինթընէն խնդրած է իր երախտագիտութիւնը յայտնել նախագահ Օպամային՝ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բարելաւման հարցով ցուցաբերուող հաստատուն աջակցութեան համար: Ան վերահաստատած է գործընթացի հետ կապուած հայկական կողմի պատրաստակամութիւնը՝ յարգելու իր միջազգային պարտաւորութիւնները եւ առաջ շարժելու՝ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման ուղղութեամբ, յոյս յայտնելով, որ նոյնպիսի պատրաստակամութիւն եւ պատասխանատուութիւն կը դրսեւորէ նաեւ թրքական կողմը:

Հեռախօսազրոյցի ընթացքին քննարկուած են նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացին վերաբերող հարցեր: Միացեալ Պետական Քարտուղարը անգամ մը եւս վերահաստատած է իր երկրի աջակցութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ եւ երկարատեւ լուծումը, միաժամանակ շեշտելով որ, ամերիկեան վարչակազմը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հանգուցալուծումը ու Հայաստան - Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորումը կը դիտէ որպէս մէկըմիւսէն անջատ գործընթացներ, որոնցմէ իւրաքանչիւրը կը նպաստէ տարածաշրջանէն ներս խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՍՏՈՐԻՆ ԲՆԱԶԴՆԵՐԸ

*Եւրոպացիները վերջապէս գլխի են ընկել, որ ՀՀ իշխանութիւնները զանազան հնարքներ են բանեցնում՝ ստանձնած պարտաւորութիւնները չկատարելու համար: Մասնաւորապէս, հասկացել են, որ ՀՀ իշխանութիւնները զանազան պատրուակներով խոչընդոտներ են յարուցում Ա1+ հեռուստաընկերութեան համար եւ հնարաւորութիւն չեն ընձեռում, որ Ա1+-ը մասնակցի յաճախականութիւնների մրցոյթին եւ դուրս գա եթեր: Այդ խոչընդոտներից է «Թուայնացման պատրուակը», որը, ըստ ԵԽԽՎ համապատասխան յանձնաժողովի եզրակացութեան, օգտագործուում է «ընդդէմ առանձին հեռարձակողների»: Ըստ այդմ, ԱԺ պատգամաւոր Զարուհի Փոստանջեանի վկայութեամբ՝ եւս մէկ անգամ ԵԽԽՎ-ն «յանձնարարական է տուել՝ դիմել ՀՀ կառավարութեանը, որ նա փոփոխութեան ենթարկի հեռուստայաճախականութիւնն արտօնագրման վերաբերեալ օրէնսդրութիւնը», այդ կերպ վերացնելով Ա1+-ի դէմ դրուած արգելքը:*

*Յիշեցնենք՝ կայ Եւրոդատարանի՝ Ա1+-ի օգտին կայացրած վճիռը, կան ԵԽԽՎ համապատասխան բանաձեւերը, որոնք, բնականաբար, համահունչ են ՀՀ ստանձնած պարտաւորութիւններին: Մինչդեռ ՀՀ իշխանութիւնները եթերը ատամներով են պաշտպանում Ա1+-ից: Այդպէս, այդչափ մոլեգին նոյնիսկ սովետական բանակը չէր պաշտպանում Մոսկուան, նոյնիսկ պարտիզանները չէին մարտնչում ֆաշիստների դէմ:*

*Ի՞նչն է ստիպում ՀՀ իշխանութիւններին՝ ընդառաջ գնալ հասարակութեան արհամարհանքին՝ քիչ է, գումարած թուքումուրը, որ ամէն առիթով մերթընդմերթ ստանում են եւրոկառոյցներից եւ միջազգային կազմակերպութիւններից: Կասէք՝ ինքնապահպանման բնազդը: Երեւի ճիշդ կ՚անէք: Սա հիմնական բնազդն է, որով առաջնորդուում են այս իշխանութիւնները:*

*Միամտութիւն կը լինի կարծել, իհարկէ, որ հենց Ա1+-ը յայտնուի եթերում՝ իշխանութիւնների երգը, ուրեմն, երգուած է: Ա1+-ի առաքելութիւնը իշխանապաշտութիւնը չէ, Ա1+-ը, մեռանք գրելով, ազատ խօսքի ամբիոն է, ճշմարիտ լրատուութեան աղբիւր: Ի՞նչ անուն, ի՞նչ բնութագրում է սազում մի իշխանութեան, որը, ահա, ամէն ինչ անում է այդ ազատ խօսքը էլեկտրոնային կայքէջում սահմանափակելու, լրատուութեան այդ աղբիւրը փակ պահելու համար:*

*Դա սովորական ողորմելի բռնապետութիւն է, դա առնչութեան եզր չունի ժողովրդավարութեան հետ: Եւ ոչինչ չարժեն, ուրեմն, իշխանաւորների շաղակրատանքները խօսքի ազատութեան, ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների մասին, երբ իրենք անձամբ են ոտնահարում դրանք: Եւ ընդամէնը նողկանք են յարուցում «հոգու դաժանութիւն", «չարութիւն" բառերը, որ պեղուում են դասականներից՝ սեփական արատները ուրիշին վերագրելու ստորին բնազդով:*

*Այս երկու՝ ինքնապահպանման հիմնական բնազդի եւ սեփական արատները ուրիշին վերագրելու ստորին բնազդի թելադրանքն է, ահա, փակ պահել եթերը Ա1+-ի դէմ:*

*Իսկ մենք ասում ենք՝ Սահմանադրական դատարան, Եւրոդատարան, ԵԽԽՎ, ՀՀ ԱԺ...*

*ՎԱՍԱԿ ԴԱՐԲԻՆԵԱՆ*
*«ՏԱՐԵԳԻՐ»*

# ԽՕՍՔԻ ԳԻՆԸ

*Շաբաթ օրը «Առաւօտը» հարցազրոյց էր հրապարակել մեր անուանի գրողներից մեկի՝ Պերճ Զէյթունցեանի հետ: Այստեղ, ի թիւս այլ վիճելի մտքերի, նա արտայայտուել է նաեւ անազատութեան մէջ գտնուող ընդդիմութեան ներկայացուցիչների մասին. «Այդ մարդիկ քաղբանտարկեալներ չեն, նրանք սովորական քրէական տարրեր են»: Անձամբ ես, այդ գրողի ստեղծագործութիւնների երկրպագուն լինելով, կտրականապէս համաձայն չեմ այդ գնահատականի հետ: Աւելին, ես կարծում եմ, որ յարգարժան գրողն այդպէս է մտածում իշխանական քարոզչութեան «ուղեղների լուացման» արդիւնքում: Իմ համոզմամբ, «այդ մարդիկ», անշուշտ, քաղբանտարկեալներ են եւ քրէօրէն պատժելի որեւէ արարք չեն գործել: Բայց ո՞վ ասաց, որ ես իրաւունք ունեմ իմ համոզմունքը յայտնելու, իսկ Պերճ Զէյթունցեանը՝ ոչ: Եւ երբ մարդիկ ինձ զանգահարում են եւ կշտամբում, թէ ինչպէս կարելի է գրողի այդ տեսակէտը հրապարակել, ես, մեղմ ասած, զարմանում եմ: Զարմանում եմ, նախեւառաջ, այն պատճառով, որ, իրենց պնդմամբ, ժողովրդավարութեան համար պայքարող գործիչները նման «իւրայատուկ» պատկերացում ունեն լրատուամիջոցների դերի մասին:*

*Եթէ մարդը պատրաստ է իր անունից դիրքորոշում յայտնել (բնականաբար, կոռեկտութեան սահմաններում) եւ դրանից յետոյ պաշտպանել իր դիրքորոշումը, այդ մարդն արժանի է յարգանքի, իսկ նրա դիրքորոշումը արժանի է հրապարակման: Իսկ երբ մարդը (առաւել եւս՝ պատգամաւորը) սկզբում մի դիրքորոշում է յայտնում, իսկ մի օր յետոյ, ճնշման տակ, իր խօսքից հետ է կանգնում, դա նոյնպէս արժանի է հրապարակման, ինչը չի կարելի ասել յարգանքի մասին: Կարծես թէ անվիճելի է, որ Սասուն Միքայէլեանի նկատմամբ պետք է մարդասիրական վերաբերմունք դրսեւորուի՝ հաշուի առնելով թէ նրա առողջական վիճակը եւ թէ ծառայութիւնները հայրենիքի առաջ: Այդ անմեղ, ապաքաղաքական իրողութեան ֆիքսումը պատգամաւորներից առանձին քաղաքացիական խիզախութիւն չէր պահանջում: Բայց երբ այդ պարզ, մարդկային քայլն արժանացաւ «վերեւների» դժգոհութեանը, նրանք յաջորդ իսկ պահին սկսեցին ծեքծեքել, արդարանալ, թէ նման թուղթ չեն ստորագրել, թէ իրենց խաբել են, թէ իրենք ստորագրել են՝ չիմանալով, չհասկանալով եւ այլն: Յիրաւի, Հայաստանում ամենադժբախտ մարդիկ ունեւորներն են (նոյն իրենք՝ պատգամաւորները): Ամէն մի ոտը գցելիս, ամէն անգամ բերանը բացելիս նրանք ստիպուած են դողալ՝ արդեօք դրանց արդիւնքում մի հատով կը պակասե՞ն իրենց երթուղային գծերը կամ գազալցման կայանները: Էլ չեմ ասում՝ աւելի մեծ բաների մասին:*

*Պատգամաւորները՝ դեռ ոչինչ: Շաբաթը մէկ խմբագրութիւն են գալիս ճարտարապետներ եւ բողոքում եմ, թէ Նարեկ Սարգսեանը քանդել-աւերել է մեր մայրաքաղաքը: Ենթադրենք, դա այդպէս է: Բայց երբ խնդրում ես նրանց ներկայանալ իրենց անուններով, այդ ճարտարապետները սարսափահար դէմքեր են ընդունում՝ «Նա անսահմանափակ լծակներ ունի, կարող է այնպէս անել, որ մենք զրկուենք մեր մի կտոր հացից»: Գուցէ դա էլ է ճիշդ: Սակայն անանուն լինելու դէպքում նրանց բոլոր բողոքները նման են «պատի տակի խօսակցութիւնների»:*

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*
*«ԱՌԱՒՕՏ»*

# ՈՐՏԵՂ Է ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ

*ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային հերթական այցը, այդ այցի շրջանակում Հայաստանը չներառելու հանգամանքը, համանախագահների յայտարարութիւնը, դրան նախորդած Օպամա-Էրտողան հանդիպումը, Հիլարի Քլինթոնի հերթական հեռախօսազանգը Սերժ Սարգսեանին, եւ էլի մի քանի իրադարձութիւններ կրկին սրել են հետաքրքրութիւնը արտաքին քաղաքական զարգացումների հանդէպ, կրկին փորձագիտական եւ քաղաքական շրջանակներին մղել են հայ-թրքական յարաբերութեան եւ Ղարաբաղի հակամարտութեան խնդիրների շուրջ ակտիւ դատողութիւնների:*

*Այսինքն, կրկին իրավիճակը զարգանում է իշխանութեան համար ձեռնտու հունով, եւ հրապարակի վրայ է այն հարցերի քննարկումը, որոնց լուծման բանալիները իրականում պէտք է որոնել ոչ թէ այդ, այլ բոլորովին այլ հարցերի քննարկման մէջ: Իսկ աւելի յստակ՝ այդ հարցերի լուծման բանալին Հայաստանում է, Հայաստանի ներքին խնդիրներում: Եթէ յաջողուում է լուծել այդ ներքին խնդիրները, ապա հայ-թուրքական եւ Ղարաբաղի հարցերում առկայ վտանգները չէզոքացնելը կարծես թէ դառնում է ընդամէնը ցանկութեան եւ տեխնիկայի հարց:*

*Արտաքին քաղաքականութիւնն ընդամէնը ներքին իրավիճակի, ներքին իրողութիւնների, ներքին ռեսուրսների վրայ կառուցուած երեւոյթ է: Հնարաւոր չէ արտաքին քաղաքականութեան ոլորտում ապահովել երկարատեւ լուծումներ, քանի որ աշխարհը փոփոխուում է, այն էլ բաւական արագ, եւ եթէ երկիրն իր ներքին դրուածքով չի համապատասխանում այդ փոփոխուող աշխարհին, ապա միեւնոյն է, արտաքին քաղաքականութիւնը յետ է մնալու աշխարհի ընթացքից եւ դառնալու է խնդրայարոյց:*

*Եթէ երկրում առկայ է տնտեսական եւ քաղաքական մոնոպոլիա, եթէ իշխանութիւնը ցանկացած հարց կարողանում է լուծել իր մոնոպոլ իրաւունքները գործի դնելով, ապա միամտութիւն է կարծել, որ հնարաւոր է իշխանութեանը ստիպել յետ կանգնել արտաքին ոլորտում իր նախաձեռնութիւններից, առաւել եւս, որ դրանց շնորհիւ իշխանութիւնը միջազգային քաղաքական կենտրոններից ստանում է ներսում լիակատար տիրապետութեան հետ կապուած առնուազն բարոյական աջակցութիւն: Բանն այն է, որ պէտք է իշխանութեանը ստիպել հաշուի նստել սեփական հասարակութեան հետ: Եթէ հասարակական-քաղաքական շրջանակները դա չեն կարողանում իշխանութեանը ստիպել, ապա միջազգային հանրութեանը Հայաստանի հասարակութեան հետ հաշուի նստել պարտադրելուն ուղղուած ջանքերը ուղղակի ապարդիւն են լինելու: Եթէ քո իշխանութեանը չես կարող ստիպել, որ հաշուի նստի քեզ հետ, ապա միջազգային հանրութեանը ստիպել հաստատ չես կարող, ու չես էլ կարող ակնկալել, որ միջազգային հանրութիւնը իր բարի կամքով հաշուի նստի քեզ հետ:*

*Իսկ իշխանութեանը հասարակութեան գործօնի մասին յիշեցնելու միակ ճանապարհը ներքին խնդիրների վրայ ուշադրութիւնը կենտրոնացնելն է: Դա նաեւ հասարակութեան համար է աւելի հասկանալի եւ ընկալելի: Թւում է, թէ դա առաւել երկար ճանապարհ է եւ մինչ դրա կէսին անգամ հասնելը, արտաքին ոլորտում «բանը բանից» կ՚անցնի: Բայց իրականում արտաքին ոլորտում առկայ խնդիրներն այդպէս շատ աւելի շուտ կը շտկուեն, վտանգաւոր զարգացումները շատ աւելի շուտ կը կանխուեն, քան առաւելապէս տեսական քննադատութիւնն ու մեղադրանքները, որոնք շարունակուում են արդէն մօտ մէկ տարի, սակայն դեռեւս դոյզն իսկ չեն ազդել թէ հանրային տրամադրութեան, թէ իշխանութեան ինքնավստահութեան, թէ միջազգային հանրութեան ծրագրերի վրայ:*

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*
*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԿՈՆԳՐԵՍԸ ՀԱՆՐԱՀԱՒԱՔ ԿԸ ՀՐԱՒԻՐԻ ՅՈՒՆՈՒԱՐԻ 8-ԻՆ



Մարդու իրաւունքներու պաշտպանութեան օրուան առթիւ ընդդիմութեան կազմակերպած երթէն տեսարան մը

«ԹԵՐԹ»: Դեկտեմբեր 10-ին Հայ ազգային կոնգրեսը երթ է կազմակերպել՝ նուիրուած մարդու իրաւունքների պաշտպանութեան օրուան: Երթի մասնակիցները նախ հաւաքուեցին Սարեանի արձանի մօտ եւ այնտեղից շարժուեցին Մաշտոցի պողոտայ-Հիւսիսային պողոտայ-Հանրապետութեան հրապարակ-Վազգէն Սարգսեան փողոց-Նալբանդեան փողոց երթուղով:

Երթի մասնակիցները ձեռքերում պահում էին բազմաթիւ պաստառներ եւ դրօշներ: Երիտասարդները թմբուկներ էին խփում եւ ողջ երթի ընթացքում պարբերաբար վանկարկում էին քաղբանտարկեալների անունները եւ Համաժողովրդական շարժման կարգախօսները:

Երթի ժամանակ ոստիկանները մի քանի անգամ փորձեցին միջամտել՝ քաշքշելով մարդկանց, սակայն կոնգրեսի ղեկավարները կասեցրեցին բախումները:

Երբ երթի մասնակիցները հասան ՄԱԿ-ի եւ ԵԽ գրասենեակների մօտ, Վլադիմիր Կարապետեանն այդ երկու կառոյցներին յանձնեց փաստաթուղթ, որտեղ զետեղուած էր Հայաստանում մարդու իրաւունքների վերաբերեալ ստեղծուած իրավիճակի կարճ նկարագիր, ինչպէս նաեւ այն, որ Հայաստանում կայ 15 քաղբանտարկեալ:

Փաստաթղթում նաեւ կար կոչ՝ ուղղուած միջազգային հանրութեանը, որպէսզի վերջինս աւելի աչալուրջ լինի եւ հետեւի Հայաստանում մարդու իրաւունքների հետ կապուած իրավիճակին:

Այնուհետեւ ժողովուրդը շարժուեց դէպի Հիւսիսային պողոտայ, որտեղ էլ երթն աւարտուեց: Հիւսիսային պողոտայում Կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբեանը նշեց, որ պայքարը բոլորովին էլ չի դադարում եւ որ այդ մասին խօսակցութիւնները սին են:

«Մեր պայքարն անկասելի է, մեր յաղթանակն՝ անխուսափելի: Եթէ այսքան վատ եղանակին, եթէ առանց միտինգի մենք կարողանում ենք այսպիսի հզօր երթ անցկացնել, ուրեմն ես ասում եմ ձեզ՝ մարդու իրաւունքները Հայաստանում վերականգնուելու են»,- ասել է Զուրաբեանը: Նա նաեւ յիշեցրել է թիւ 10-րդ ընտրատարածքում Յունուարի 10-ին կայանալիք ընտրութիւնների մասին, որոնցում ՀԱԿ-ը պաշտպանելու է Նիկոլ Փաշինեանի թեկնածութիւնը:

«Դուք բոլորդ հասկանում էք, որ սա ԱԺ մանտատի կռիւ չէ, այլ պայքար՝ մեր քաղբանտարկեալների ազատութեան համար... Եւ մենք կոչ ենք անելու մեր բոլոր համակիրներին գալ ընտրական հանրահաւաքին»,- նշել է ՀԱԿ համակարգողն ու յաւելել, որ Նիկոլ Փաշինեանին նուիրուած հանրահաւաքը տեղի կ'ունենայ Յունուարի 8-ին:

# ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ



Վիկտոր Համբարձումեանի յուշարձանը Երեւանի մէջ

Սերժ Սարգսեանն Դեկտեմբեր 15-ին ներկայ է գտնուել Հայաստանի Հանրապետութեան Ազգային Հերոս, աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումեանի յուշարձանի բացման արարողութեանը:

Մեծ գիտնականի յուշարձանը տեղադրուել է մայրաքաղաքի Տէրեան-Աբովեան փողոցների միջեւ գտնուող գբօսայգում, աստղադիտարանի մօտ: Ձեռնարկն իրականացուել է Վիկտոր Համբարձումեանի ծննդեան 100-ամեակի յոբելեանական յանձնաժողովի կողմից:

Մեծ գիտնականի յուշարձանը տեղադրուել է մայրաքաղաքի Տէրեան-Աբովեան փողոցների միջեւ գտնուող գբօսայգում, աստղադիտարանի մօտ: Ձեռնարկն իրականացուել է Վիկտոր Համբարձումեանի ծննդեան 100-ամեակի յոբելեանական յանձնաժողովի կողմից:

# ԱԺ-Ի ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻՆ



Սասուն Միքայէլեան

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ազգային ժողովի 21 պատգամաւորներ՝ իշխող կոալիցիայի Հանրապետական եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնների ներկայացուցիչներ եւ անկախ պատգամաւորներ, բաց նամակ են յղել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին՝ խնդրելով ներում շնորհել 2008 թուականի յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ 8 տարուայ ազատազրկման դատապարտուած նախկին պատգամաւոր Սասուն Միքայէլեանին:

Պատգամաւորները մտահոգութիւն են յայտնել Սասուն Միքայէլեանի առողջական վիճակի մասին՝ ընդգծելով. - «Անկախ նրանից, թէ Միքայէլեանն ինչ պատճառներով է կալանաւորուել, մենք խնդրում ենք Ձեզ՝ օգտուելով Սահմանադրութեան 55 յօդուածով Ձեզ վերապահուած լիազօրութիւններից, ներում շնորհելու միջոցով ազատել Սասուն Միքայէլեանին պատժի հետագայ կրումից»:

Դեկտեմբերի սկզբին չնչառական համակարգի վիրահատութեան ենթարկուելու նպատակով Սասուն Միքայէլեանը, ում առողջական վիճակը կտրուկ վատթարացել էր, «Դատապարտեալների հիւանդանոց» քրէակատարողական հիմնարկից տեղափոխուել էր «Արմենիա» բժշկական կենտրոն (Նախկին Հանրապետական) հիւանդանոց, որտեղ նա շարունակում է մնալ ոստիկանների խիստ հսկողութեան տակ:

Այսօր աւելի ուշ Ազգային ժողովի Հանրապետական խմբակցութիւնը պարզաբանում է տարածել՝ կապուած Սասուն Միքայէլեանին ազատ արձակելու մասին նամակի հետ:

Նամակում ասուած է. - «Ըստ լրատուամիջոցների տարածած հաղորդագրութեան, ՀՀԿ խմբակցութեան մի քանի անդամներ ստորագրել են Սասուն Միքայէլեանին ներում շնորհելու միջնորդագրի տակ: Յայտնում ենք, որ ըստ գործող օրէնքների նման լիազօրութիւն չի նախատեսուած: ՀՀԿ խմբակցութիւնը առաջնորդւում է միայն ու միայն օրէնքներով: Խմբակցութեան անդամներին բանաւոր ներկայացրել են մի բան՝ փորձելով մարդասիրական մօտեցումներ ձեւաւորել: Այնպէս որ նոյնիսկ եթէ ստորագրել են, դա չի կարող վերաբերել առաջադրուած տեքստին»:

# ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐԵԱՆԸ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ Է ՅԱՅՏՆՈՒԵԼ ՏԵՍԱԵՐԻԶԻ ՊԱՏՃԱՌՈՎ



Օլիմպիական ախոյեան մարմնամարզիկ Ալբերտ Ազարեան

«Ես ուղղակի ազնուութեամբ եմ ասում, այնքան վատ վիճակի մէջ եմ: Ես զարմանում եմ, ինչո՞ւ պիտի ես հայհոյէի»,- Դեկտեմբերի 11-ին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարել է օլիմպիական չեմպիոն, մարմնամարզիկ Ալբերտ Ազարեանը: Խօսքը ինտերնետում տարածուած մի տեսաերիզի մասին է, որտեղ պատկերուած են 2008թ. նախագահական ընտրութիւնների ժամանակ Սերժ Սարգսեանի քարոզարշաւի գովազդային հոլովակներից դուրս մնացած կադրերը, որոնցից մէկում յայտնի մարմնամարզիկ Ալբերտ Ազարեանը գովում, գովում է Սերժ Սարգսեանին, ապա զայրանում, հայհոյանք տալիս ու հեռանում, իսկ միւս կադրում դերասան Հրանդ Թոխատեանն է, վերջին բառերով յիշում Երեւանի նախկին քաղաքապետ Երուանդ Զախարեանին:

«Ես ելոյթ եմ ունենում, ասում եմ, որ մեր նախագահը լինի Սերժ Սարգսեանը, շատ լաւ կը լինի, ու ..: Դա հնարաւոր բան չի: Ինչի՞ ես պիտի յիմար բան ասեմ: Ես նոյնիսկ տանը տենց բաներ չեմ ասում: Ուղղակի սիրտս կանգնեց: Ով արել ա, թող գլուխը պատին տա: Դա չպիտի անեի, էլի»,- փորձում էր լրագրողներին համոզել Ազարեանը, բայց ապարդիւն:

Ըստ 80-ամեայ մարմնամարզիկի, այդ կադրերը ինտերնետում դնողին պէտք է այնպիսի «տոյժ տալ, որ հասկանայ, որ տենց բան պէտք չի անել: Ո՞նց կարելի է վարկաբեկել այնպիսի մարդուն, որ իր կայանքը դրել է Հայաստանի համար»: Ազարեանը նաեւ նշեց, թէ կադրերը մոնտաժուած են, իսկ ինքը որեւէ հայհոյանք Սերժ Սարգսեանի հասցէին չի արել:

Հարցին, թէ ինչպէս է վերաբերւում, որ արուեստի, սպորտի, մշակոյթի գործիչները ամէն անգամ օգտագործւում են քաղաքական գործիչների քարոզարշաւի համար, Ազարեանը պատասխանեց, «Դա ճիշդ չի, իհարկէ»: Ըստ մարմնամարզիկի, ճիշդ բան չէ նաեւ, որ Հրանդ Թոխատեանը հայհոյանքներ է տալիս Երեւանի նախկին քաղաքապետ Երուանդ Զախարեանին:

Ի դէպ, Ազարեանը յայտնեց, որ իրեն խոստացել են գտնել տեսանիւթը տարածողին եւ պատժել: Հարցերին, թէ ով է խոստացել, երբ է նկարուել այդ հոլովակը, որտեղ, ով է հրաւիրել իրեն, Ազարեանը հրաժարուեց պատասխանել:

Ճանաչուած մարզիկը նաեւ ասաց, թէ իրեն նախագահականից դեռ չեն նեղել տեսանիւթի համար:

## ԼՈՒՐԵՐ

# ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԸ «ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ - 2009»-ԻՆ ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Հայաստանցի խոշոր գործարարները Նոյեմբերի 27-ին կազմակերպուած Հեռուստամարաթոնի ընթացքում կամ գումար ընդհանրապէս չեն փոխանցել կամ համեստ ներդրում են ունեցել: «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար, խոշոր գործարար Գագիկ Ծառուկեանը հիմնադրամին ընդհանրապէս գումար չի փոխանցել, այն դէպքում, երբ անցած տարի նա 2 միլիոն դոլար էր յատկացրել: Գումարներ չեն նուիրաբերել նաեւ խոշոր գործարար Հրանդ Վարդանեանը եւ Նախագահ Սերժ Սարգսեանի եղբայրը՝ Սաշիկ Սարգսեանը:*

*«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հրապարակուած ցուցակում հայաստանցի ընդամէնը 2 գործարար է խոշոր նուիրատուութիւն կատարել՝ 200 հազար դոլար Ազգային Ժողովի պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանը եւ 101 հազար դոլար, «Փեթակ» տօնավաճառի սեփականատէր Վարուժան Գիրգորեանը:*

*«Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրէն Արա Վարդանեանը վստահեցրեց, որ բոլոր պաշտօնեաները՝ այդ թւում նաեւ Լեռնային Ղարաբաղից, մասնակցել են Հեռուստամարաթոնին: Նա, սակայն, դժուարացաւ ասել թէ Նախագահ Սերժ Սարգսեանը որքան գումար է յատկացրել, քանի որ Նախագահի աշխատակազմից ստացել են մօտ 8 հազար դոլար, որի մէջ ներառուած է նաեւ հանրապետութեան Նախագահի մասնակցութիւնը:*

*Ի դէպ, այս տարի նուիրատուութիւններ չեն կատարել նաեւ հայազգի խոշոր բարերարներ Քըրք Քրքորեանը եւ Հրայր Յովնանեանը:*

*«Մեր հանդիպումների ընթացքում նրանք պարզաբանել են, որ պատճառը տնտեսական ճգնաժամն է, չվստահելու խնդիր չկայ», - ասաց Արա Վարդանեանը:*

*Յիշեցնենք, որ այս տարի խոստացուած եւ կատարուած նուիրատուութիւնների գումարը կազմում է 15 միլիոն 875 հազար 43 դոլար:*

# ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՓԱԿՈՒԵՑ ՔՐԴԱԿԱՆ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ



**«ԺՀԿ» ղեկավար Ահմեդ Թուրք**

*Թուրքիայում փակւում է քրդական «Ժողովրդավարական հասարակութիւն» (DTP) կուսակցութիւնը: Թուրքիայի Սահմանադրական դատարանը 4-օրեայ քննարկումներից յետոյ, որոշում կայացրեց, որ յիշեալ կուսակցութիւնը պէտք է փակուի: Թուրքիայի ՍԴ Նախագահ Հաշիմ Քըլըչը յայտնել է, որ կուսակցութեան փակման որոշումը կապուած է կուսակցութեան եվ PKK-ի միջեւ կապեր ունենալու, Թուրքիայի անբաժանելիութեան սկզբունքին վնասներ հասցնելու համար: Նրա խօսքով, «Ժողովրդավարական հասարակութիւն» կուսակցութեան ղեկավար Ահմեդ Թուրքը եւ իր բազմաթիւ այլ կուսակիցներ զրկուեցին քաղաքականութեամբ զբաղուելու իրաւունքից: Բացի այդ պետութիւնը կը բռնագրաւի յիշեալ կուսակցութեան գոյքը եւ այլ միջոցները: Դեկտեմբերի 11-ի քննարկումը տեւել է 8 ժամ:*

*NEWS.am-ը յիշեցնում է, որ Թուրքիայի գլխաւոր դատախազութիւնը տուեալ կուսակցութիւնը փակելու հայցը ներկայացրել է 2007 թուականի Նոյեմբերի 16-ին: «Ժողովրդավարական հասարակութիւն» կուսակցութիւնը մեղադրւում է Թուրքիան մասնատելուն միտուած գործողութիւնների մէջ: Հայցում պահանջւում է կուսակցութեան 221 անդամի զրկել քաղաքական գործունէութեան իրաւունքից: Հայցադիմումում ներկայացուած է 141 պատճառ, որի համար անհրաժեշտ է փակել յիշեալ կուսակցութիւնը:*

*Քրդական «Ժողովրդավարական հասարակութիւն» կուսակցութեան փակման համար անհրաժեշտ էր,որ Թուրքիայի Սահմանադրական դատարանի 11 անդամներից 7-ը կողմ քուէարկէին:*

*Նշենք, որ յիշեալ կուսակցութեան անդամները թուրքական խորհրդարանում պարբերաբար հանդէս են գալիս հայերի օգտին յայտարարութիւններով: Օրինակ, այդ կուսակցութեան երիտասարդ պատգամաւոր Սելահեթին Դեմիրթաշը Թուրքիայի խորհրդարանում հայ-թուրքական ստորագրուած արձանագրութիւնների քննարկումների ժամանակ մեղադրեց Թուրքիայի իշխանութիւններին հայերի կոտորածները դասագրքերում չզետեղելու եւ դրա փոխարէն սխալ տեղեկութիւններ տալու մէջ:*

*«Ժողովրդավարական հասարակութիւն» կուսակցութեան ղեկավարի պապը, ըստ «Էրգենեկոնի» գործով ձերբակալուած նախկին յատուկջոկատային Իբրահիմ Շահինի, եղել է հայ, ով 1925 թուականին հալածանքներից խուսափելու համար փոխել է ազգանունը:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՒԻ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐԸ

Հայաստանի Հանրապետութեան երիտասարդական կուսակցական կազմակերպութիւնների տարածել են յայտարարութիւն, որը ստորագրուել է Դեկտեմբերի 11-ին, Եռաբլուր պանթէոնում:

»Մենք՝ Հայաստանի Հանրապետութեան կուսակցական կազմակերպութիւնները ներկայացնող երիտասարդներս, դատապարտում ենք Ադրբեջանի ղեկավարութեան կողմից վերջերս յաճախակիացած ռազմատենչ յայտարարութիւնները, պատերազմ նախաձեռնելու վերաբերեալ: Գտնում ենք, որ խաղաղութիւնը մարդկային պատմութեան կարեւորագոյն արժէքներից է համաշխարհային հանրութեան, առաւել եւս մեր տարածաշրջանի համար: Ադրբեջանի նախագահի եւ պաշտպանութեան նախարարի՝ պատմութիւնից դասեր չքաղած եւ պատերազմը վերսկսելուն ուղղուած յոխորտանքները պարսաւելի են անգամ այն դէպքում, եթէ դրանք ունեն բացառապէս քարոզչական նպատակներ: Իսկ եթէ այսպիսով հող է նախապատրաստւում ռազմական գործողութիւնները վերսկսելու համար, ապա Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներն ու նախեւառաջ երիտասարդութիւնը պատուով կ՚ընդունեն այս մարտահրաւէրը եւ հերթական անգամ զէնքը ձեռքին կը պաշտպանեն արցախցու, իր հայրենիքում ԱԶԱՏ ապրելու իրաւունքը, ինչպէս նաեւ արժանի հակահարուած տալով ագրեսորին՝ կը պատժեն նրան իր պատեհապաշտ գործողութիւնների համար՝ պարտադրելով նրան խաղաղութիւն, չբացառելով ԼՂՀ Սահմանադրութեամբ ամրագրուած տարածքների շուրջ անվտանգութեան գօտու ստեղծումը:

Մենք վստահ ենք, որ պետականութեանը սպառնացող վտանգը կը միաւորի Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բոլոր քաղաքացիներին՝ անկախ նրանց սոցիալական դիրքից եւ քաղաքական հայեացքներից: Որպէս արտաքին սպառնալիքին յանդիման նման միասնութեան օրինակ, մենք՝ քաղաքական տարբեր ուղղուածութիւն ունեցող երիտասարդ քաղաքացիներս, մեր պատրաստակամութիւնն ենք յայտնում հայրենիքին սպառնացող վտանգի առարկայացման դէպքում մի կողմ թողնել բոլոր քաղաքական տարաձայնութիւնները եւ միասնաբար մարտնչել մինչեւ յաղթանակ: Յանո՜ւն ազատութեան: Յանո՜ւն խաղաղութեան. Յանո՜ւն Հայաստանի Հանրապետութեան:

ԱԺՄ երիտասարդական թեւ
«Ժառանգութիւն» կուսակցութեան «Հայք» ուսանողական-երիտասարդական միութիւն
«Հանրապետութիւն» կուսակցութեան երտասարդական թեւ
ՀՅԴ Հայաստանի երտասարդական միութիւն
ՀՅԴ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութիւն
ՀՌԱԿ «Արմենակ Երկանեան» երիտասարդական ակումբ
ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութիւն

# ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԲՌՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԻՆ ԵՒ ՀԱՄԱՆԵՐՄԱՄԲ ԱԶԱՏՈՒԵՑԻՆ ՊԱՏԺԻՑ

*Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանը դատաւոր Գագիկ Աւետիսեանի գլխաւորութեամբ Ջորեքշաբթի, Դեկտեմբեր 16-ին համաներում կիրառեց 2008-ի Մարտի երկուսին Մաշտոցի պողոտայում երկու քաղաքացիների ծեծի ենթարկած ոստիկանների նկատմամբ:*

*Մեղադրող դատախազ Աշոտ Նադոեանը իր մեղադրական ճառում 3-ական տարուայ ազատազրկում եւ համաներում պահանջեց ոստիկաններ Անդրանիկ Մանուկեանի եւ Գեղամ Գրիգորեանի համար՝ նրանց մեղաւոր ճանաչելով բռնութեամբ զուգորդուած գործողութիւններ կատարելու մէջ:*

*«Գտնում եմ, որ ամբաստանեալներ Անդրանիկ Մանուկեանին եւ Գեղամ Գրիգորեանին մեղսագրուած արարքները լիովին հիմնաւորուած ու ապացուցուած են: Դատաքննութեամբ հաստատուեց, որ ամբաստանեալները դիտաւորութեամբ կատարել են իրենց լիազօրութիւնների շրջանակից ակնյայտօրէն դուրս եկող, բռնութեամբ զուգորդուած գործողութիւններ՝ էական վնաս պատճառելով անձանց եւ պետութեան օրինական շահերին», - իր մեղադրական ճառում ասաց Աշոտ Նադոեանը:*

*Բռնութեան ենթարկուած քաղաքացիները յայտնաբերուած չեն, ոստիկանների դատն անցկացուեց առանց տուժող կողմի:*

*Անդրանիկ Մանուկեանին եւ Գեղամ Գրիգորեանին դատարանը մեղաւոր ճանաչեց, դատապարտեց երեքական տարի ազատազրկման, բայց կիրառելով համաներում յայտարարելու մասին ԱԺ Յունիսի 19-ի որոշումը՝ ազատեց պատժից:*

# ԵԽԽՎ ԶԵԿՈՅՑՈՒՄ ԿԸ ԼԻՆԻ Ա1-Ի ՀԱՐՑԸ

*«ԼՐԱԳԻՐ»: ԱԺ Ժառանգութիւն խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը Դեկտեմբեր 14-ին ԱԺ-ում հրաւիրուած ասուլիսի ժամանակ տեղեկացրեց, որ ԵԽԽՎ առաջիկայ նիստի ժամանակ զեկոյց է հրապարակուելու՝ կապուած ԵԽԽՎ անդամ պետութիւններում խօսքի եւ մամուլի ազատութեան հետ: Բացի զեկոյցից, ընդունուելու է նաեւ յանձնարարական: Փոստանջեանը տեղեկացրեց, որ ԵԽԽՎ-ն իր մտահոգութիւնն ու ափսոսանքն է յայտնել, որ մինչեւ օրս Թուրքիայի քրէական օրէնսգրքի 301 յօդուածը չի վերացուել, մինչեւ օրս չի աւարտուել Հրանդ Դինքի սպանութեան գործի ամբողջական քննութիւնը:*

*Ըստ Փոստանջեանի՝ Հայաստանի վերաբերեալ ԵԽԽՎ-ն ուշադրութիւն է հրաւիրել Ա1+ հեռուստաընկերութեանը հետեւողականօրէն մրցոյթից օգտուելու հնարաւորութիւն չտալու փաստի վրայ:*

ՏԵՍԱԿԷՏ

# ԹՈՒՐՔԻԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

## ԱՄԷՆ ԻՆՉ ԴՐԷ՛Ք ՍԵՂԱՆԻ ՎՐԱՅ

*ՐԱՖՖԻ Կ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*

*Ուաշինգտոնում, Բրիւսելում, Մոսկուայում եւ այլուր Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլը, վարչապետ Էրդողանը, արտգործնախարար Դաւութօղլուն եւ միւսներն ի սկզբանէ կողմնակից են եղել, որ Հայաստանի հետ իրենց երկրի յարաբերութիւնների բնականոնացումը եւ Ատրպէյճանի հետ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հանգուցալուծումը միատեղուեն ընդհանուր մի քաղաքական օրակարգի մէջ:*

*Ես համաձայն եմ:*

*Նորանկախ Հայաստանի, թւում էր՝ հասուն քաղաքականութիւնը, որին ես աջակցում էի իբրեւ երկրի առաջին արտգործնախարար, եւ որը դիւանագիտական յարաբերութիւնների հաստատում էր առաջարկում առանց նախապայմանների, այս «խաղի» արդէն 18-րդ դարում կարելի է հռչակել մեռելածին:*

*Տարօրինակ էր, բայց սպասուած, որ Անքարայում առաւել փորձառու կառավարութիւնը՝ փոխանակ վերջնականապէս ճանաչի օսմանեան-երիտթուրքական իր նախնիների պատասխանատուութիւնը 1915թ. Մեծ եղեռնի եւ Հայրենազրկման համար կամ նուազագոյնը պաշտօնական «աննախապայման» յարաբերութիւններն օգտագործի դրանից ածանցուող խնդիրները քննելու ու լուծելու նպատակով, սկզբից առաջադրեց միակողմանի մի շարք պահանջներ: Հիմնական պայմաններին՝ ա) Հայաստանի միջազգային «բռնապաշարից» Ցեղասպանութեան եւ դրա ամրագրման բացառումը, եւ բ) Թուրք-հայկական դէ ֆակտօ սահմանի վաւերացումը, որը պարտադրուած էր 1921թ. քեմալաբոլշեւիկեան դաւադրավճռով, որոշ ժամանակ անց աւելացաւ գ) հայատրպէյճանական յարաբերութիւնների կարգաւորման եւ ազատութեան, յետստալինեան ապազաղութացման ու ինքնիշխան պետականութեան համար Լեռնային Ղարաբաղի մղած օրինական պայքարի պաքուամէտ հանգուցալուծումը:*

*Անցեալում ուժերի երկկողմ անհամաչափութեանը միացել է նաեւ դիւանագիտական վարքագծի ժամանակակից անհամաչափութիւնը, որն ընդգծւում է Թուրքիայի կողմից չարունակուող ոչ հարեւանավայել շրջափակմամբ: Սա վերջնականօրէն անհնար է դարձնում, որպէսզի այլեւս ժամկետանց մեթոդաբանութեամբ կամրջուի Թուրք-հայկական ջրբաժանը:*

*Այս հաշուով Թուրքիան ճիշտ է: Ուստի եւ ողջ պատմութեան մէջ առաջին անգամ եկէք ամէն ինչ բերենք ու դնենք սեղանի վրայ եւ դարբնենք համընդգրկուն մի նախագիծ, որը մեզ կը տանի դէպի խաղաղութիւն, բարգաւաճում եւ ընդհանուր անվտանգութեան համարձակ մի նոր ապագայ՝ կողմերի եւ լայն տարածաշրջանի համար:*

*Այս խիզախ մանրակերտը, որը կը պահանջի միջազգային հանրութեան կառուցողական աջակցութիւնը, պէտք է լուծում ու «փակում» տայ օրակարգում գտնուող առանցքային մի շարք կէտերի.*

*1) Ժողովրդավար վարկ վայելող շրջանային առաջատարի իր յաւակնութիւններն ի կատար ածելու համար Թուրքիան պէտք է առերեսուի յիշողութեան գզրոցում գտնուող իր գլխաւոր մեղքի հետ, յաղթահարի տասնամեակներ ձգուող մերժողականութիւնը եւ յետպատերազմեան Գերմանիայի հիմնարար, բայց, աւաղ, դեռ եզակի օրինակով իր սեփական «յեղափոխական ուղին» ուրուագծի դէպի ճանաչում ու զղջում, փոխհատուցում ու ամբողջացում: Սա կարող է իրականանալ ազգայնամոլ օրէնքների վերացմամբ, պատմութեանն արժանին մատուցելով ու կրթութիւնը ճշմարտութեամբ օժտելով, ներկայիս Արեւելեան Թուրքիայում մշակութային անծայրածիր ժառանգութեան համալիր գոյքագրմամբ, ապա եւ՝ վերականգնումով եւ դրա հայկական ինքնութեան տօնախմբմամբ, ինչպէս նաեւ ձեռնարկելով ու կեանքի կոչելով տունդարձի նախաձեռնութիւնը, որով կ'երաշխաւորուի Ցեղասպանութիւնից մազապուրծ վերապրողների ու հայրենազրկուածների ժառանգների կամաւոր վերադարձի իրաւունքը դէպի հայոց բնօրրան:*

*2) Թուրքիայի եւ Հայաստանի հանրապետութիւնների միջեւ ճշգրիտ սահմանագատումը հրամայական է. արդեօ՞ք դա այն դէ յուրէ սահմանն է, որը 1920թ. Նոյեմբերին յստակեցուեց եւ վճռուեց ԱՄՆ նախագահ Վուդրօ Ուիլսոնի նախագահական կնիքով, թէ՝ այն դէ ֆակտօ սահմանը, որը մնաց 1921թ. ռուս-թրքական յանցագրով հայոց հայրենի ժառանգութեան առիւծի բաժինն ուզուրպացնելուց յետոյ: Ինչպիսի՞ն է ներկայում թրքական բռնագաւթման տակ գտնուող պատմական հայրենիքի իրաւական կարգավիճակը, եւ արդեօ՞ք Հայաստանն ունի դէպի ծով ինքնիշխան ելքի իրաւունք: Այս կապակցութեամբ՝ եւ սոյն հարցերին պատասխանելու համար կողմերի դիւանագիտական բարի կամքի բացակայութեան պայմաններում, իրենց դիրքորոշումների ու մտավախութիւնների հաւանական արտայայտիչը կը լինի Արդարադատութեան միջազգային դատարանի հարկադիր իրաւասութեան իրենց ընդունումը:*

*3) Նոյնը վերաբերում է Լեռնային Ղարաբաղին եւ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններին: Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ շահերի գերակայութիւնը յաճախ իշխում է օրէնքի գերակայութեան վրայ, ուր արեւմտեան երկրների մեծամասնութիւնը յաղթահարել է տարածքային ամբողջականութեան սկզբունքի նկատմամբ հերթապահ նախապատուութիւններն ու ճանաչել Քոսովոն, ինչպէս դա արեցին նաեւ Ռուսաստանի Դաշնութիւնը եւ մի քանի այլ երկրներ Աբխազիայի պարագայում: Միջազգային օրէնքի, Մոնտեվիդէոյի դաշնագրի, Արցախի անկախութեան հանրաքուէի ժամանակ ուժի մէջ եղած խորհրդային օրէնսդրութեան ներքոյ՝ նրա ինքնիշխանութեան իրաւական հիմունքները նոյնքան ուժեղ են, եթէ չասենք աւելի պատկառազդու, քան վերոնշեալ օրինակները: Քոսովոյի եզակիութեան* sui generis *պատճառաբանումն օգտագործւում է իբրեւ չողչողուն պիտակ, որն իրականում մատնում է մի կեղծ զանազանում՝ առանց, սակայն, ճշմարիտ որեւէ տարբերութեան: Եթէ օրէնքների եւ իրաւունքների գերակայութիւնը կարեւոր է բոլոր այն երկրների համար, որոնք ճանաչեցին Քոսովոն կամ Աբխազիան, ապա նրանք անմիջապէս պէտք է գործի անցնեն եւ ճանաչեն ԼՂՀ-ը՝ նրա սահմանադրական սահմաններով: Եւ Հայաստանն ու Թուրքիան պէտք է առաջնորդուեն այս ուղին:*

*4) Իսկ ինչ վերաբերում է «բռնագրաւուած» տարածքների եւ փախստականների վերադարձի հռետորաբար հաւաքուող քարոզչական միաւորներին, ապա Արցախի դէմ ատրպէյճանական ձախողուած նախայարձակ պատերազմի սոյն հետեւանքների «գործը» փակուած է: Եւ այն փակուած կը մնայ մինչեւ կամ քանի դեռ. ա) Թուրքիան իր վերահսկողութեան տակ գտնուող հայկական գաւառները չազատի բռնագաւթումից եւ թոյլ չտայ, որ ցեղասպանուածների ժառանգներն իրականացնեն ազգային օճախ վերադառնալու իրենց իրաւունքը եւ բ) Ատրպէյճանը վերջ չդնի Շահումեանի, Գետաշէնի ու Նախիջեւանի հայկական տարածքների բռնագաւթմանը եւ չհատուցի 2005թ. Դեկտեմբերին Ջուղա կոչուող մշակութային հրաշքի վայրագ ու վաւերագրուած ոչնչացման համար, վերադարձի իրաւունք եւ հատուցում չտրամադրի Արցախից ու Ատրպէյճանից 400 հազար հայ փախստականներին, չճանաչի Արցախը եւ դրանով մեկնարկ չտայ վերջինիս հետ պաշտօնական բանակցութիւններին, որպէսզի աւարտին հասցուեն սահմանի կարգաւորման ու զատման, առեւտրի ու կապի, խաղաղութեան ու հանրային ապահովութեան դրոյթները:*

*Սրանք սոսկ մի քանի առաջնային խնդիրներ են, որոնք հարկաւոր է ներառել պաշտօնական Անքարայի վաղուց ի վեր առաջադրած «փոխկապուածութեան» օրակարգում: Եթէ նրա այս յամառ պահանջն այլ բան չէ, քան հատուածապաշտական թոյլ քամի կամ քաղաքական պատասխանատուութիւնից փախուստ տալու եղանակ, ապա ժամանակը հասունացել է, որպէսզի բոլոր իրերը դրուեն սեղանին, քաղաքակրթօրէն ներկայացուեն նախընտրելի նախա- եւ յետպայմանները եւ որոշուի, թէ որ հարցերը կարող են հիմնալուծուել դիւանագիտութեամբ եւ որոնք են պահանջում դիմել դատական միջազգային ատեանների օգնութեանը: Ինքնին այս գործընթացը՝ առանց կանխորոշելու դրա արդիւնքների արդիւնաւէտութիւնը, կարող է ե՛ւ կողմերին, ե՛ւ նրանց գործընկերութեանը «տանել» աննախադէպ բնականոնացման լոյսի ու նրանց ժողովուրդների միջեւ երկար սպասուած հաշտութեան հեռանկարի:*

*Քաղաքականութիւն ստեղծողների եւ վերլուծողների համար հաւասարապէս ի գիտութիւն. ճանապարհը դէպի ժողովրդավարական արժէքների ու համաշխարհային անվտանգութեան նորդարեայ համայնքի մէջ տարածաշրջանային սերտաճում, դէպի Կովկաս, Կենտրոնական Ասիա եւ Աֆղանստան, դէպի էներգետիկ աղբիւրների ապահովում ու ռազմավարական այլ առաջնահերթութիւններ*

*Շար.ը էջ 18*

Blue Cross of California
Authorized Agent
Blue Shield of California
Authorized Agent
A.B.A. INSURANCE SERVICES
SERVING SINCE 1975
BEDROS S. MARONIAN
(818) 500-9585
BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

# ՄԷՋՔՈՎ ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏԸ

Հայ-թրքական յարաբերութեան կարգաւորման գործընթացին զուգահեռ աճում է Հայաստանի անշարժ գոյքի շուկայով հետաքրքրուող թուրքերի քանակը, որոնք ցանկանում են Հայաստանում ձեռք բերել անշարժ գոյք:

**ՋԷՅՄՍ ՅԱԿՈԲԵԱՆ**
**«ԼՐԱԳԻՐ»**

*Անշարժ գոյքի գործակալութիւնները, որոնց մի մասի ներկայացուցիչների հետ զրուցել էր Lragir.am-ի թղթակիցը, հայ-թրքական յարաբերութեան կարգաւորման գործընթացին զուգահեռ աճում է Հայաստանի անշարժ գոյքի շուկայով հետաքրքրուող թուրքերի քանակը, որոնք ցանկանում են Հայաստանում ձեռք բերել անշարժ գոյք:*

*Դա բաւական հետաքրքրական տեղեկատուութիւն է եւ թերեւս կարող է լինել հայ-թրքական յարաբերութեան տնտեսական էֆեկտի առաջին ապացոյցը: Բանն այն է, որ թուրքերը կարող են աշխուժացնել Հայաստանի անշարժ գոյքի շուկայի մեռեալ վիճակը: Այդ մեռեալ վիճակը պայմանաւորուած էր նրանով, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցութիւնը Հայաստանի վրայ յանգեցրեց թէ կապիտալ շինարարութեան, թէ հիպոթեկային վարկաւորման ճգնաժամի: Իսկ դրանից էլ բացի, երեւի թէ այն բոլոր սփիւռքահայերը, որոնք ցանկութիւն ունէին տուն գնել Հայաստանում, արդէն իսկ գնել են եւ արդէն որեւէ բնակարան չի մնացել, որից կ'երեւայ Արարատը:*

*Հիմա թերեւս եկել է Արարատին «չնայող» բնակարանները վաճառելու ժամանակը: Կասկած չկայ, որ Թուրքերին կը հետաքրքրեն հենց այդպիսի բնակարանները: Իսկ եթէ նոյնիսկ համարենք, որ Թուրքերն էլ կը ցանկանան գնել բնակարաններ, որոնք «կը նայեն» Արարատին (չէ որ կարող են լինել ճաշակով Թուրքեր, իսկ բացի այդ էլ Թուրքերի մի զգալի մասի արմատները հայկական են ու առնուազն ենթագիտակցութիւնը կարող է իր դերը կատարել), ապա միեւնոյն է, Արարատին չնայող բնակարանները կրկին կը վաճառուեն:*

*Բացատրեմ, թէ ինչպէս:*

*Բանն այն է, որ եթէ պարզ դառնայ, որ Թուրքերը Հայաստանում ուզում են բնակարան գնել, այն էլ այնպիսի բնակարան, որից կ'երեւա Արարատը, մինչ այդ Արարատին «նայող» բնակարաններ գնած սփիւռքահայերի համար դա կարող է իսկական շոկ լինել: Բնականաբար նրանք չեն հանդուրժի, որ նոյն բնակարանային ճաշակն ունենան Թուրքերի հետ: Այդ իսկ պատճառով, շատ հաւանական է, որ Արարատին «նայող» բնակարան գնած սփիւռքահայերը նմանատիպ բնակարան գնելու ցանկութիւն ունեցող Թուրքերի ինադու, որպէսզի չլինեն նրանց հետ համաճաշակ, կը սկսեն վաճառել իրենց գնած բնակարանները եւ գնել բնակարաններ, որոնցից Արարատը չի երեւում:*

*Այսինքն, հայ-թրքական յարաբերութիւնն առնուազն կը փրկի Հայաստանի անշարժ գոյքի շուկան, ինչը մուլտիպլիկատիւ էֆեկտի շնորհիւ կ'անդրադառնայ ամբողջ տնտեսութեան վրայ: Իսկ թերահաւատները կարծում են, որ տնտեսական էֆեկտի մասին իշխանութեան հաւաստիացումները արհեստածին են: Դրանք միանգամայն իրատեսական են. ընդամէնը մի անշարժ գոյքի ոլորտի համատեքստում մենք տեսանք, թէ ինչ մեծ պոտենցիալ ունի հայ-թրքական յարաբերութիւնը:*

*Իսկ յետոյ Թուրքերն իրենց գնած բնակարանները վարձով կը տան բնակարանի կարիք ունեցող հայաստանցիներին, որոնք բնականաբար չեն կարող իրենք ձեռք բերել բնակարան, քանի որ նախ հայ-թրքական բարեկամութեան տեսանկիւնից գեղեցիկ չի ստացուի, եթէ մենք ոչ թէ Թուրքերին թոյլ տանք բնակարան գնել, այլ մենք գնենք բնակարանները: Իսկ դրանից բացի էլ, բնակարանների գներն այնպէս կ'աճեն, որ Հայաստանի քաղաքացիները երազում անգամ չեն կարող մրցակցել Թուրքերի հետ բնակարան գնելու հարցում: Կը մնայ միայն Թուրքերից բնակարան վարձելը: Բայց դա էլ կը լինի դրական շարժ: Թուրքերը հայաստանցիներին աւելի էժան կը տան բնակարանը վարձով, քան թէ կը տային կամ տալիս են հայաստանցի բնակարանատէրերն իրենց հայրենակիցներին: Թուրքերը էժան տուող են, «թանկաբազար» չեն, ինչպէս յիշատակում են տարեց հայաստանցիները խորհրդային տարիներից, երբ Հայաստանի շուկաներում առեւտուր անող հայաստանաբնակ ատրպէյճանցիները բաւական էժան էին վաճառում իրենց գիւղմթերքը, քան հայ գիւղացիները: Այնպէս որ, Թուրքերի գալով, Հայաստանի անշարժ գոյքի շուկայում բնակարանների գները կը թանկանան, բայց փոխարէնը մեծ յաւանականութիւն կայ, որ կ'էժանանան վարձով տրուող բնակարանները: Թէեւ կայ ի հարկէ մի լուրջ խնդիր: Բանն այն է, որ հայ-թրքական յարաբերութեան այդօրինակ ջերմացման հետեւանքը գուցէ լինի այն, որ Հայաստանում կը գայ մի ժամանակ, երբ բնակարան թէ վաճառողները, թէ գնողները, թէ վարձողները կարող են լինել առաւելապէս Թուրքեր:*

**ՄԱՍԻՍ**
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ
ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ



# ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՐԾԻՒ՝ ՄԻՍԱՔ (ՉԱՒՈՒՇ) ՔԷՇԻՇԵԱՆ

*ՍԱՄՈՒԷԼ ԱՆԹՈՍԵԱՆ*

*19-րդ դարու վերջին արիւնոտ Սուլթան Համիտի գործադրած հայկական ջարդերը եւ Հայոց Ցեղասպանութիւնը ծնան արդար վրիժառութեամբ գործող հայ հերոսներ, որոնք փառքով պսակեցին մեր դիմադրողական շարժումը եւ վերապրելու, գոյատեւելու աննկուն կամքը:*

*Թուրքիան կը ջանայ աշխարհին համոզել, որ վրիժառու հայ քաջերը ահաբեկիչներ էին: Աւերելով ամէն ինչ որ հայկական է, մէկ միլիոն ու կէս հայեր անապատի խորքերը աքսորելով, օտարերկրացիներու համար անմատչելի դար ու փոսեր, ամենաանմարդկային միջոցներով հայերը սպաննելով, Թուրքիան ինք պատճառ եղաւ, որ վրիժառու հայորդիներ զէնքը ձեռքերնին պատժեն թուրք մարդասպանները: Հայ քաջերը կը գործէին իրենց հրամանատարներու հրահանգով. չսպաննել կիներ եւ երեխաները, անմեղները չպատժել, բայց եւ՝ ոչնչացնել թուրք զինուորը: Բոլոր հրամանատարներու մէջ բացառիկ էր զօրավար Անդրանիկը: Հայ բանաստեղծներն ու երգահանները շատ ստեղծագործութիւններ նուիրած են զօրավարին: Ճիշդ է Շահան Շահնուրը, որ Անդրանիկը կը գնահատէ որպէս անանցանելի փառքի տէր եւ Մեսրոպ Մաշտոցի, Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ Կոմիտաս վարդապետի մեր սրբութեան սրբոցը:*

*Ստորեւ կը ներկայացնենք զօրավար Անդրանիկի արծիւներէն համեստ հայորդի մը՝ Միսաք (Չաւուշ) Քէշիշեան: Մականունը ցոյց կու տայ, որ անոր գերդաստանին մէջ հոգեւորական եղած է, քանի որ «քէշիշ» հայերէն հոգեւորական, քահանայ բառերուն թրքերէնն է: Եւ իրօք, Տէր Մարտիրոս քհնյ. Քէշիշեան եղած է Ատանայի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հովիւը:*

*Միսաք Չաւուշ ծնած է Ատանա 1895-ին: Ան 14 տարեկան էր, որ տեղի ունեցան Ատանայի ջարդերը եւ 30,000 անմեղ հայերու կեանքը խլեցին: Միսաքի ծնողքները եւս թրքական եաթաղանի զոհը կը դառնան: Միսաք որբ կը դառնայ: Ատանայի ջարդի զոհը դարձած էին նաեւ պատանի Միսաքի գերդաստանի գրեթէ բոլոր անդամները: Միսաք դիակներու կոյտերու տակէն կ'ելլէ եւ Մամաս անունով բարի մարդու մը խնամքով կը վերապրի: Որբութեան ծանր ճակատագիրը կը դաջուի պատանու ճակատին: Որոշ ժամանակ անց՝ կ'իյնայ հայ որբերու խումբին մէջ եւ կը տարուի Պոլիս: Իրենց բնակատեղիին կից որբ աղջիկներու որբանոցին մէջ ան կը գտնէ իր վերապրած հօրեղբօր աղջիկը: Պոլսահայ մեծահարուստ Գնաճեանը կ'որդեգրէ ուշիմ պատանին եւ անոր կը սորվեցնէ ոսկերչութիւն եւ ադամանդագործութիւն: Միսաք իր գործին մէջ այնքան յառաջ կ'երթայ, որ վարպետը զինք կը գործուղէ Պելճիքա իր արհեստարուեստը կատարելագործելու:*

*Ճակատագրի խաղեր... կը սկսի Պալքանեան պատերազմը եւ Միսաքը փոխադրող նաւը խարիսխ կը նետէ յունական Ռոտոս կղզին եւ այլեւս չի շարժիր: Իր ծնողները եւ գերդաստանի բոլոր անդամները սպաննած թուրքի դէմ ատելութեամբ եւ վրէժով լեցուած, երիտասարդ Միսաքը կը միանայ Թուրքիոյ դէմ պատերազմող յոյն փարթիզաններու մակեդոնական բանակին:*



*1914-ին Միսաք Քէշիշեան կու գայ Վանա եւ կը ներկայանայ զօրավար Անդրանիկին: Որպէս ձնոդագուրկ, ան կը մտնէ զօրավարի անմիջական ղեկավարութեան տակ գործող խմբի մէջ: Այնուհետեւ, մինչեւ 1919, ուր զօրավարն էր, հոն ալ իր Չաւուշն էր: Ի դէպ, որպէս քաջարի զինուոր, ան կ'արժանանայ «չաւուշ»ի (գումարտակի պետի, յիսնապետի) զինուորական աստիճանի:*

*Իր կենսագիրը՝ Ժ.Ա. կը գրէ. «Միսաք Չաւուշ կը մասնակցի Վանի եւ ապա Պիթլիսի գրաւումին: 1919-ի Փետրուարին Չաւուշ զօր. Անդրանիկի հետ Կարին կը վերադառնայ ու կը մնայ թշնամիներուն կրակին մէջ ամբողջ խմբով եւ ամենէն ետք թշնամու թնդանօթի արկին զոհ կու տայ իր ձին, սակայն ինք կ'ազատի»: Միսաք Չաւուշ այնուհետեւ կ'անցնի Լոռի եւ ապա Անդրանիկի հետ՝ Նախիջեւան: Յայտնի պատճառներով զօր. Անդրանիկ 1919-ին զէնքը յանձնելով Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կը դադրեցնէ իր գործունէութիւնը, Միսաք Չաւուշ կ'ուղեկցի իր սիրելի զօրավարին մինչեւ Պաթում: Առաջին Աշխարհամարտին Թուրքիան պարտուած կողմ էր. դաշնակից զօրքերը մտած էին Պոլիս եւ Կիլիկիա: Պաթումէն Չաւուշ կը վերադառնայ Ատանա, կը դառնայ Ս.Դ.Հ.Կ.-ի անդամ: 1920-ին Միսաք Չաւուշ կ'ամուսնանայ օրիորդ Վերժին Տարաքճեանի հետ՝ բախտաւորուելով չորս զաւակներով: Ատանա գտնուած շրջանին Միսաք Չաւուշ զինուորներ կը մարզէ. Կիլիկիոյ հայութիւնը յոյս ունէր, որ Եւրոպայի յաղթանակած քրիստոնեայ պետութիւնները պիտի աջակցին հայերուն Կիլիկիոյ մէջ անկախ հայ պետականութիւն հիմնելու: Ճիշդ ըսուած է՝ «Պետութիւնները շահեր ունին եւ ոչ թէ բարեկամներ»: Որպէսզի հայութիւնը իրենց չհետեւի, ֆրանսական զօրքը Կիլիկիայէն կը փախչէր ջորիներուն սմբակներուն թաղիք կապած, որ ձայն չ'ելլէ: Կիլիկիոյ պարպումէն ետք Միսաք Չաւուշ կ'երթայ Իզմիր ուր կը դառնայ Ղեւոնդ Դուրեան սրբազանի բարապան-թիկնապահը: 1922-ին, Իզմիրի դէպքերու ժամանակ Միսաք Չաւուշ կը կազմակերպէ Դուրեան սրբազանի անվտանգ մեկնումը Յունաստան: Իզմիրի դէպքերու ատեն Միսաք Չաւուշ հերոսաբար կը պաշտպանէ Պագըրճեան Օրիորդաց վարժարանը յառաջացող թուրք խուժանէն: Ան իտալական դրօշակներ կը պարզէ՝ խաբկանք ստեղծելով, որ դա իտալական դպրոց մըն է: Եւ խուժանը կը հեռանայ: Այնուհետեւ Միսաք Չաւուշ կը կազմակերպէ դպրոցի ամբողջ աշակերտութեան ապահով մեկնումը Յունաստան: Միսաք Չաւուշի Կիլիկեան շրջանի գործունէութեան մասին վերոյիշեալ կենսագիրը՝ Ժ.Ա. կը նշէ. «Զէյթէական շարժումներուն առաջին օրէն քաղաքի ինքնապաշտպանութեան կը նուիրուի, գիշեր ու ցերեկ, թաղէ թաղ կը շրջի ու անդուլ կը հսկէ: Չաւուշ այստեղ ալ իրական հոգին կը դառնայ իր շուրջիններուն. ուր որ Չաւուշն էր, հոն անպայման յանդգնութիւնը ու մահը արհամարհելու հոգի մը կար»:*

*Դուրեան սրբազանի արտօնութեամբ 1922-ին Միսաք Չաւուշ կը մեկնի Կիպրոս, իւրայիններուն մօտ: Առ ի գնահատութիւն Միսաք Չաւուշի աշխատանքին, Դուրեան սրբազանը հետեւեալ բարի վարուց վկայականը տուած է անոր: «Առաջնորդարանի բարապաններէն Պ. Միսաք Քէշէշեան իր պաշտօնավարութեան շրջանին օրինակելի վարքով, ժրաջան գործունէութեամբ եւ աննման հաւատարմութեամբ ծառայած ըլլալուն, սոյն վկայագիրը տրուեցաւ իրեն ի գիտութիւն որոնց որ անկ է». ստորագրութիւն Ղեւոնդ սրբազան Դուրեան: Ժամանակի ներգործութենէն դալկացած այս փաստաթուղթը սրբութեամբ կը պահեն իր զաւակները:*

*Զօրավար Անդրանիկին ստիպեցին հեռանալ, Կիլիկիան պարպուեցաւ:*

*Ի՞նչ պիտի ընէր հայ արծիւը: 1923-1926-ին Կիպրոսի մէջ ինքնաշարժի վարորդ է. գաղութը փոքր, ի՞նչ գործունէութիւն ծաւալես: 1927-ին ան վերջնականապէս կը հաստատուի Լիբանան, Պէյրութ: Պէյրութ ապաստանած էր ցեղասպանութեան մնացորդացը: Միսաք Չաւուշ լայն ազգային հասարակական կուսակցական գործունէութիւն կը ծաւալէ: Ան «Նոր Ատանա» թաղամասի հիմնադիրներէն մէկն է, կը կազմակերպէ Թրատ թաղի դպրոցի եւ եկեղեցւոյ կառուցման հանգականութիւն:*

*Հայրենականչին անսալով՝ 1947-ին ընտանեօք, չորս զաւակներով կը ներգաղթէ Հայաստան: Երազելի Հայաստան աշխարհ, որուն իր ամբողջ երիտասարդութիւնը անսակարկ նուիրած է զօր. Անդրանիկի արիւծը: Միւս կողմէ, իր անցեալի գործունէութեան հանդէպ անտարբերութիւն, անվստահելիութիւն եւ հետապնդումներ: Տնտեսական դժուարութիւններ... Միով բանիւ պետական անվտանգութեամբ կառավարուող երկիր:*

*Այս ամէնին կը յաջորդէ հիասթափութիւնը:*

*Միսաք Չաւուշ ընդամէնը 11 տարի ապրեցաւ Հայաստանի մէջ: Իր անցեալի թափառական կեանքը՝ ցուրտը, տաքը, անկանոն սնունդը, բնական է, բացասաբար անդրադարձած էին իր առողջութեան վրայ: 1957 Փետրուար 25-ին Միսաք Չաւուշ Քէշիշեան կը կնքէ իր մահկանացուն ընդամէնը 62 տարեկանին:*

*Մկրտիչ Պէշիկթաշլեան պիտի ըսէր. «Ազգիդ համար մեռար,*

*Դուն շատ ապրեցար»: Չաւուշի ամբողջ գիտակցական կեանքը նուիրում մը եղած է իր ժողովուրդի արդար դատին ու վրէժին, ազատ-անկախ ապրելու վեհ գաղափարին: Իր դաւանած կուսակցութեան ղեկավարներէն Փարամազ կախաղան հանուելէ առաջ ըսած էր. «Դուք մեզ քսաններս կը կախէք, բայց գիտցած եղէք, որ մեր ետեւէն քսան հազարներ մեր վրէժը պիտի լուծեն»: Այդ քսան հազարներէն մէկն էր Միսաք Չաւուշ Քէշիշեան:*

*Աղօթք եւ խունկ իր յիշատակին: Թող իր յոգնատանջ մարմինը*

*հանգստանայ հայրենի հողի գիրկին մէջ եւ հոգին «սաւառնէ հայրենի լեռ ու սարն ի վեր»:*



**ԳԻՏԱԺՈՂՈՎ**

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

*Պօղոս Թիւթիւնճեան*
*Պատմական գիտութիւնների դոկտոր*



Շնորհաւորելի բովանդակալից մակարդակով, արդի փոփոխութիւնների եւ զարգացումների համընթաց քայլ պահելու հայացակարգով կրթական գիտաժողով:

21-րդ դարու առաջադրանքներով, աւանդական դարձած II կրթական գիտաժողովը, տեղի ունեցաւ 20-21 Նոյեմբերի, 2009թ., Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) օտարերկրիա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի (ՕՔՆՖ) գլխաւոր դահլիճում, ներկայութեամբ աւելի քան 200 դասախօսների, ուսուցիչների, մանկավարժների, որ նրանց շարքում գտնւում էին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ, դոկտոր պրոֆեսորներ, ռեկտորներ, պրոռեկտորներ, դեկաններ, դոցենտներ:



*Հօրեղբայրս, երբոր 1968ին Պոլիսէն մեզի այցելութեան եկաւ, նորից անդրադարձաւ դրան: Դիմումներ գրեց, դէս ու դէն գնաց եւ գնաց Պոլսի Մարմարա թերթում հրատարակեց իր յօդուածը, որ «փնտռել եմ եղբօրս աճիւնը Մինաս Ջերազի եւ Հայաստանում հնարաւոր չեղաւ գտնել զայն«:*

*Ուրեմն, ցարդ տեսանք թէ՝ որքան ճիշդ եւ որքան սխալ տեղեկութիւններ տրուած էին հանրութեան մեր անմահանուն մեծերուն մասին:*

*Սակայն, Կոմիտաս վարդապետին մարմինը Հայաստան փոխադրելու եւ հայրենի հողին մէջ թաղելու հարցը այնքան ալ հեզասահ կերպով չընթացաւ:*

*Ինչպէս վերը ըսի, որոշուեցաւ 1936ին Հայաստան ներգաղթողներուն հետ ղրկել Կոմիտաս վարդապետին դագաղը:*

*Այս մասին ամենավերջին արտայայտուողը եղած է Խաչիկ Բադիկեան, Հայաստանի «Ազգ» թերթին 26 Սեպտեմբեր 2009ի թիւին մէջ «Կոմիտասի Աճիւնը Փարիզից Երեւան է փոխադրւում Աղասի*

*Շար.ը էջ 18*

## ԳՐԱԿԱՆ

# ՇՆՈՐՀԱՆԴԷՍ ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆԻ «ԽՃԱՆԿԱՐ» ԳԻՐՔԻՆ ԱՌԹԻՒ

*ԱՒԵՏԻՍ ՍԱԼԻՔԵԱՆ*

Սփիւռքահայ տաղանդաշատ արձակագիր, հրապարակագիր եւ ազգային-հասարակական գործիչ Հայկ Նագգաշեանի վերջին հրատարակութեան՝ «Խճանկար» կէս դարու հրապարակագրութեան (1957-2009) գիրքին առթիւ, տեղի ունեցաւ շնորհանդէս Ուրբաթ, 4 Դեկտեմբեր 2009, երեկոյեան ժամը 7:30ին, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ եկեղեցւոյ «Վաչէ Ցովսէփեան» սրահին մէջ: Սոյն ձեռնարկը գեղեցիկ մտայղացումն էր գանատահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ Եպս. Գալստանեանի, ըստ արժանւոյն գնահատելու հեղինակին աւելի քան կէս դարու հրապարակգրական յօդուածներու ընտրանին: Պէտք է խոստովանիլ, որ սրահը մարդաշատ էր: Այս առիթով Թորոնթոյէն մասնաւորաբար ժամանած էր Ռ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութեան Ատենապետ՝ պրն. Մայք Խարապեան:

Բացման խօսքով հանդէս եկաւ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Վազգէն քհնյ. Պոյաճեան, որ բարեգալուստի մաղթանքներէն ետք, մասնաւորաբար նշեց որ Սրբազան հօր փափաքով, շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ կարելի եղաւ իրականացնել մեր այսօրուան ձեռնարկը: Ապա հրաւիրեց օրուան հանդիսավար՝ պրն. Աւետիս Սալիգեանը, որպէսզի ընթացք տայ յայտագրին:

Պրն. Սալիգեան նախ համապարփակ կերպով ներկայացուց մեծարեալին կենսագրական գիծերը, եւ ապա հպանցիկ ակնարկ մը նետեց անոր գրական գործերուն վրայ: Ան իր խօսքին մէջ նշեց, որ Նագգաշեանի գրականութեան հիմնական դաշտը Եթովպիան է, ուր ան անցուցած է իր կեանքի տասներեք տարիները, թէ որպէս հայերէնի ուսուցիչ եւ թէ որպէս ազատ ասպարէզի տէր մարդ: Ինչպէս ինք կը վկայէ իր առաջին պատմուածքին մէջ, թէ տարիներու իր երազը եղած է «ինքզինք Ափրիկէ նետել, ապրելու համար որսորդութեան ու վայրի անտառային կեանքին յուզումները, վախերն ու հաճոյքները»: Այնուհետեւ պրն. Սալիգեան ընդգծեց, որ երկու հիմնական թեմաներ կը շօշափուին առհասարակ գրողին ստեղծագործութիւններուն մէջ. որսորդական-արկածախնդրական կեանքը, խառն ամուսնութիւնները եւ անոնցմէ ծնած խառնածին սերունդը, ինչպէս նաեւ խաղամոլութիւնը, որ նորութիւն է մեր գրականութեան մէջ:

Հանդիսավարը մասնաւորաբար շեշտեց, որ «եթէ Հայկ Նագգաշեան, իբրեւ գրող, հոգեպէս շատ բան կը պարտի հայրենի գրող՝ Վախթանգ Անանեանին, ապա իբրեւ ազգային-հասարակական գործիչ իր երախտագիտութիւնը կը յայտնէ «սերունդներու կերտիչ«՝ Վահէ-Վահեանին, որ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ եղած է իր Հայերէնի ուսուցիչը, իր մէջ կերտելով հայու նկարագիրը, եւ յետագային 1946-47ի դէպի Հայաստան ներգաղթի տարիներուն դէմ կենալով գրողին Հայաստան ներգաղթելու բուռն փափաքին, քաջալերած է որ ան մնայ Լիբանան, եւ լծուի հայապահպանման կարեւոր եւ անյետաձգելի աշխատանքին«:

Այնուհետեւ «Խճանկար» գիրքէն ընթերցումներ կատարեցին Ալին Նագգաշեանը եւ Նորա Քէշիշեանը: Անոնք յաջորդաբար կարդացին «սերնդափոխութեան Անհրաժեշտութիւնը» եւ «Ինչո՞ւ Կը Սիրեմ Հայերէն Լեզուն» գրութիւնները, զորս մեկնաբանուեցան խոր ըմբռնումով ու զգացումով եւ յստակ առոգանութեամբ:

Ապա հանդիսավարը հրաւիրեց Սրբազան Հայրը, որպէսզի ան հանգամանօրէն ներկայացնէ «Խճանկար»ը: Սրբազան հայրը իր օրհնանքի խօսքերով եւ գովեստով արտայայտուելով Հայկ Նագտգաշեանի վերջին հրատարակութեան մասին ըսաւ հետեւեալը. «Սոյն հսկայածաւալ աշխատութեամբ մեզ եւ ամբողջ հայ հասարակութեանը կը ներկայանայ պրն. Նագգաշեանը որպէս գրական-հասարակական գործիչ, վերլուծաբան, քաղաքագէտ, բարոյախօս եւ վերջապէս իր ազգի ցաւերով ու մտահոգութիւններով, ինչպէս նաեւ յաջողութիւններով եւ ուրախութեամբ ապրող, շնչող ազնիւ հայորդի մը, որը կ՚արձանագրէ դէպքերն ու իրադարձութիւնները, ոչ թէ սոսկ յօդուածագրի փեշակով, այլ յատկապէս ականատես ապրողի վկայութեամբ»:

Արդարեւ, Սրբազան Հայրը «Խճանկար» գիրքի ներկայացման ընթացքին, կարեւորութեամբ շեշտեց որ այն իր մէջ կը խտացնէ հայ կեանքի վերջին աւելի քան 50 տարիներու մանրանկարը իր բազմաթիւ երեսներով՝ ազգային-քաղաքական, եկեղեցական, կուսակցական, մշակութային, ընկերային եւ այլ հրատապ հարցեր, որոնք անկասկած շահեկան շատ բան կը պարունակեն թէ սփիւռքի եւ թէ հայրենիքի իրականութեան մասին, աւելցնելով որ անոնց մէկ մասը առենին լոյս տեսած է կուսակցական եւ այլ թերթերու մէջ: Ան առանձնայատուկ կերպով անդրադարձաւ վերոյիշեալ թեմաներով գրուած յօդուածներուն, մերթ ընդ մերթ մէջբերումներ կատարելով գիրքէն:

Իր խօսքին աւարտին, Սրբազան Հայրը անգամ մը եւս վեր առաւ մեծարեալին անսակարկ նուիրաբերումը իր ժողովուրդին եւ հայրենիքին, իր շնորհաւորանքները փոխացնելով հեղինակին, անոր ազնիւ տիկնոջը՝ Սօսիին, զաւակներուն՝ Վահանին, որուն կը պատկանի «Խճանկար» գիրքին կողքին գծագրութիւնը, Սեւանին եւ Շահէին: Ան մասնաւոր շնորհակալութիւններ յայտնեց սոյն շնորհանդէսը կազմակերպողներուն եւ մասնակիցներուն:

Ի պատիւ մեծարեալին, գաղութիս սիրուած երգչուհի՝ Յասմիկ Գասպարեան –Սալիգեան եւ տաղանդաւոր դաշնակահար՝ Խաչատուր Ղազարեան կատարեցին պրն. Նագգեաշեանի սիրած երգերէն՝ Վ. Պալեանի «Լիրիկական»ը եւ Ա. Հէքիմեանի «Բարի Արագիլ»ը, որոնք ներկաներուն բուռն ծափողջիւններուն արժանացան: Այնուհետեւ, դարձեալ երգով հանդէս եկաւ սիրուած երգիչ՝ Ներսէս Ատուրեան, որ կիթառի ընկերակցութեամբ Վահան Նագգաշեանի կատարեց Սայեաթ Նովայի «Քանի Վուր Ճան Իմ» եւ Ռ. Ամիրխանեանի «Հայի Աչքեր» երգերը, խան-

Շար.ը էջ 17

# ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԶԱՐԵՀ ՄԵԼԳՈՆԵԱՆ
## ԺԽՈՐԻՆ ՄԷՋ ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ
## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (2009)




Շնորհակալութեամբ ստացանք սփիւռքահայ ծանօթ այլ վաստակաշատ բանաստեղծ Զարեհ Մելգոնեանի «Ժխորին մէջ Առանձնութեան» բանաստեղծութիւններու պատկառելի հատորը, զոր լոյս ընծայած է Ֆրիմոնթ, 2009-ին, մեկենասութեամբ Վաչէ եւ Թամար Մանուկեան Ֆոնտի:

Գիրքը որպէս նախաբան, կը կրէ Զարեհ Մելգոնեանի ներկայ ստեղծագործական գործին՝ Պերճ Զօլագեանի համառօտ վերլուծականը, Օշին Քէշիշեանի «Զարեհ Մելգոնեան Բանաստեղծը» գրախօսականը, նաեւ՝ Մելօ Էքիզեանի «Խօսք Երախտագիտութեան» շնորհակալագիրը:

Ներկայ գեղատիպ, խնամեալ եւ գեղարուեստական դասաւորումով համալրուած պերճաշուք հատորը կը բաղկանայ 189 մեծադիր էջերէ: Անոնք բաժնուած են ութը ենթաբաժանումներու, ուր հեղինակը բարձր արուեստով կը քանդակէ զգացական, հոգեբանական, ազգային, մշակութային, հայրենասիրական եւ հոգէ-մտաւոր մարդկային մտորումներ, որոնք ամէն ընթերցումէ ետք առիթ կը դառնան խորհրդածութիւններու: Ան կը խօսի յուետեսութեան, լաւատեսութեան, սիրոյ, հայրենասիրութեան, տիեզերքի, Աստուծոյ արարչագործութեան ու այն բոլորի մասին, որոնք կապ ունէին ապրող մարդու, կեանքի, աշխարհի արարչագործութեան հետ, ինչ որ ցոյց կու տան ներկայ գործը բաղադրող ութը գլուխներու (1) Դարպասէն Ներս Այս Հատորին», (2) Երկու Օրերուն Ափերուն Վրայ Ժամանակին, (3) Դուռին Դիմաց Կիսաբաց Իրականութիւններուն, (4) Կամուրջներուն Տակ, Ու Նկուղներուն Մէջ՝ Հայոց Պատմութեան, (5) Շամիրամին, Արա Գեղեցիկին, Մորփէոսին, ու Կղէոպատրային, Հետ Առանձին, (6) Երազի մը Մթամա՛ծ Երկնակամարին Ներքեւ, (7) Ցանձնուա՛ծ Ալեծուփ մակոյկներուն Մարդկային Ճակատագրի՛ն, (8) Սեմին Վրայ Մշտագո՛յ՝ «Ինչ-Ոչինչ»-ին ու «Ոչինչ», «Ինչ»-ին տակ երգած աւելի քան 182 երգերը:

Զարեհ Մելգոնեանի «Ժխորին մէջ Առանձնութեան» ներկայ գործը աւելի քան ութը տասնամեակներ, անվերջ վերիվայրումներով ապրած բանաստեղծի մը ալեկոծ ներաշխարհի դրսեւորումն է պարզապէս: Նաեւ է՝ պատգամագիրը երեւութապէս յուետեսութիւն առթող այս երկը, խորքին թափանցելու փոքր աշխատանք մը ի յայտ պիտի բերէ հոգեպարար լաւատեսութիւն մը, որ ջերմութեամբ կը գեղու ընթերցողին համակ էութիւնը:

# ՏԻԳՐԱՆ ԱՒԱԳԵԱՆ
## ԿԱՐՕՏԻ 70 ԵՐԳ
## (Բանաստեղծութիւններ 2009 - Երեւան)




Գրասեղանիս վրայ կը գտնուի բանաստեղծ Տիգրան Աւագեանի 70 բանաստեղծութիւններէ կազմուած փոքրակազմ հատորը, որուն սկզբնական պարզ թերթատումս իր աւարտին հասաւ, հատորով կլանուած միաշունչ ընթերցանութիւնս: Ներկայ գիրքը, որ լոյս տեսած է 2009-ին, Երեւան, կը բովանդակէ հեղինակին գործերուն ընտրանին: Ան ձօնուած է հեղինակին ծննդեան 70-ամեակին եւ կը կրէ Ներսէս Աթաբեկեանի նախաբանը: Գիրքը հրատարակութեան պատրաստուած է Աւետիս Աւագեանի կողմէ:

«Կարօտի 70 Երգերը» հատորին մէջ տեղ գտած մէկն մի քերթուած, երկնուած է բանաստեղծական խորը պարզութեամբ, հաղորդական ջերմութեամբ, տակաւ սուզուող իմաստալից խոհունակութեամբ եւ մերթ տժգոյն բայց տիրող հարուստ պատկերներով:

Տիգրան Աւագեան կ՚երգէ՝ որպէս ստուեր եկող եւ շուտով յուշ դարձող կեանքը: Սամնայ արիւնը երակներուն՝ կ՚երգէ «կարկաչող առուի ղօղանչով արբած իր պապերուն դալարագեղ հողը հայրենական(79): Կ՚երգէ, բացի «Կարօտի ճիչէ, կարօտի ձայնէ՝ աշխարհում ետին ոչինչ չի ձգող կեանքը: Կ՚երգէ սէրը, կարօտը, մօր նման սիրալիր, խնկաբոյր, սուրբ աղօթք մեղրածոր հայրենիքը:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

## ԳՐԱԿԱՆ

# ՄՈՒՐԱՑԱՆ

### (ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)
### (1-12-1854, ՇՈՒՇԻ, 30-8-1908, ԹԻՖԼԻՍ) ՀԱՅ ԳՐՈՂ:

*Ծնուել է արհեստաւորի ընտանիքում: Նախնական կրթութիւնն ստացել է մասնաւոր դպրոցներում, այնուհետեւ ուսումը շարունակել Շուշիի թեմականում, որն աւարտել է 1873ին: Մէկ տարի կատարելագործուել է ֆրանսերէնի իմացութիւնը, երկու տարի հայոց լեզու եւ պատմութիւն աւանդել մանկավարժ Խորէն Ստեփանի դպրոցում: 1877ին շրջագայել է Արցախի ու Սիւնիքի պատմական յիշարժան վայրերում, ուսումնասիրել հին յիշատակարաններ, այնուհետեւ գրել «Հասան-Ջալալեան ազգի համառօտ տոհմագրութիւնը»երկը: 1878ին մեկնել է Թիֆլիս: Սովորելով հաշուապահութիւն՝ աշխատանքի է անցել առեւտրական տներից մէկում, որտեղ եւ մնացել է մինչեւ կեանքի վերջը: Մուրացանի երկերը լոյս են տեսել ազգային պահպանողական հանդէսներում ու թերթերում՝ «Մեղու Հայաստանի», «Նոր դար», «Արձագանք», «Թատրոն», «Լումա»: Շուշիում գործում է Մուրացանի անունը կրող միջնակարգ դպրոց: Մուրացանի գրական նախափորձերը վերաբերում են վաղ պատանեկութեան տարիներին: Դրանք եղել են սիրոյ, կարօտի, հայրենասիրութեան բանաստեղծական ռոմանտիկ ներշնչումներ, որոնց նմուշները ժամանակին լոյս են տեսել «Արարատ» եւ «Արշալոյս Արարատեան» պարբերականներում: Մուրացանը գրական ճանաչման է արժանացել «Ռուզան կամ Հայրենասէր օրիորդ» (1881) պատմական դրամայով, որն առաջին անգամ հրատարակուել է 1900ին, «Թատրոն» հանդէսում: Սիւժէն ընտրելով XIII դ. թաթար-մոնղոլական արշաւանքների շրջանի Արցախի պատմութիւնից, գրողը գլխաւոր հերոսին օժտել է առաքինութեան, անձնազոհութեան ու հայրենասիրութեան բարձր գիտակցութեամբ, հաստատել հայ ժողովրդի «բարոյական արժանաւորութիւնը»: Մուրացանը ուրոյն դիրքորոշում ունէր 1880ական թթ. սուր բնոյթ ստացած հասարակական հոսանքների գաղափարական պայքարում: Լիբերալիզմի գաղափարախօսները ազգի պահպանութեան հիմքը համարում էին «նիւթական հարստութիւնը». Մուրացանը դրան հակադրում էր «Բարոյական հարստութիւն» տեսակէտը, մերժում էր այն ամէնը, ինչ դէմ ընթաց էր ազգային միասնութեան եւ աւանդական կեցութեան գաղափարին: Կրօնական այլադաւանութիւնը, ըստ նրա նոյնպիսի չարիք է, ինչ եւ կուսակցական բաժանումը: Արմատական ռեֆորմներն ու յեղափոխական վերաշրջումները չընդունելով՝ Մուրացանը երկիւղ ունէր, թէ այդ ամէնը կարող է խարխլել ազգային գոյականութեան հիմքերը՝ եկեղեցին, ընտանիքը, ազգային աւանդական սովորոյթներն ու բարքերը: Այս իրողութիւնը որոշակի ուղութիւն է տուել Մուրացանի ստեղծագործութեանը՝ դրան յաջորդելով բացայայտ միտումնաւորութիւն: «Հայ բողոքականի ընտանիքը» վիպակում, «Իմ կաթոլիկ հարսնացուն» վէպում նա արծարծել է եկեղեցադաւանաբանական հարցեր, քննադատել կաթոլիկ հայերի բարոյական վարքագիծը: «Հասարակաց որդեգիրը» (1884), «Հարուստները զուարճանում են» (1884), «Ինչ լայեղ է«(1885), «Անպաճառ իշխանուհի» (1886) պատմուածքներում եւ «Ջհաս է« (1886) վէպում ռոմանտիկական հեգնանքի դատափետումների է ենթարկում հայ ապազգայնացող վերնախաւերին, ամենաստր տագնապներով վերապրում բարքերի այլափոխութիւնն ու բարոյական արժէքների կորուստը: Իրականութեան մէջ չգտնելով իր իտէալները՝ Մուրացանը հայեացքն ուղղում է դէպի պատմական անցեալը: «Գէորգ Մարզպետունի» (1896) վէպը նրա ռոմանտիկական պատմափիլիսոփայութեան համապարփակ մարմնաւորումն է. արտացոլելով 10րդ դ. Բագրատունիների հայկական թագաւորութեան շրջանի իրադարձութիւնները, Մուրացանը ցոյց է տալիս անձնական երջանկութեան եւ պարտականութեան ողբերգական ներհակութիւնը Աշոտ Երկաթ թագաւորի կերպարում: Ըստ Մուրացանի, թագաւորը, այսինքն՝ պատմական անհատը, իրաւունք չունի ազատ լինելու, իսկ ազատ անհատը՝ թագաւոր: Այս տեսակէտից սպարապետ Գէորգ Մարզպետունին մարմնաւորում է գրողի իտէալը: «Անդրէաս երէց» պատմավէպի սիւժէն վերցուած է Հայաստանում XVII դ. սկզբի պարսկական տիրապետութեան շրջանի իրադարձութիւններից, պատկերում է Ագուլիսի դպրոցի վերակացու Անդրէաս երէցի նահատակութիւնը՝ յանուն հայրենիքի եւ հայադաւան եկեղեցու:*

*«Տիկին Փիլարեանի վիշտը» (1897), «Պսակների բողոքը» (1899), «Թէ ինչու իմ ստորագրութիւնը չընդունեցին» (1902) պատմուածքներում գրողը սուր ծաղրի է ենթարկում իմբերալիզմի գաղափարախօսներին: «Խոջիվանքում» (1886), «Հանելուկը լուծուեցաւ» (1890),*

*«Երկուսից որը» (1891), «Մարդը մտադրում է, իսկ կինը կարգադրում է (1897), «Ցպահանջ» (1899) պատկերներում բացայայտւում են մարդկային հոգեբանութեան տարերքում թաքնուած անբացատրելի պարադոքսները: Մուրացանի ստեղծագործութիւնը հայ դասական գրականութեան ամենաինքնատիպ էջերից է: Ասպարէզ մտնելով հայկական ռոմանտիզմի բուռն վերելքի շրջանում՝ Մուրացանը թէեւ ականատես եղաւ այդ դպրոցի քայքայմանը, սակայն մշտապէս հաւատարիմ մնաց գեղարուեստական իր վաղ նախասիրութիւններին եւ դարձաւ հայկական ուշ ռոմանտիզմի ամենախոշոր դէմքը: Գեղարուեստական ոլորտների մէջ առնելով հայկական իրականութեան բոլոր բնագաւառները՝ նա վաւերացրեց մի ամբողջ պատմաշրջան եւ արձագանքեց ազգային ու սոցիալական իրադարձութիւններին:*



# ՊԱՂՏԱՏԻ ՍԸՄՍԱՐԸ

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

- Ահա՛ այս է սըմսարը - կ'ըսէին իրարու փսփսուքով այն կանայք, որոնք տունը հարսնացու աղջիկ մը ունէին, կամ ի մօտոյ պիտի ունենային:

Վհուկի նման կին մըն էր այս սըմսար ըսուածը: Նիհարակազմ, դէմքի այտոսկրները դուրս ցցուած, ծուռ քիթով, խորունկ նայուածքով, թուխ դիմագծով կին մը, որ վաթսունական թուականներուն քանի մը անգամ այցելած էր Երուսաղէմ Սուրբ Քաղաքը, ուխտի՞... թէ հարսնացուի «վաճառականութեամբ«:

- Ո՞վ կարդալ սիրտը գիտէ - պիտի ըսէր բանաստեղծութեան իշխանը՝ Վահան Թէքէեան:

Սըմսարին ներկայութիւնը վանքին մէջ, կայծակնային արագութեամբ տարածուեցաւ:

Դիմագիծը արդէն բաւ էր, զատորոշուելու միւս ուխտաւորներէն:

Այն օրերուն, ուխտաւորները առհասարակ կու գային, Սուրիոյ եւ Լիբանանի հայաշատ քաղաքներէն եւ կը լեցնէին վանքի ուխտաւորաց սենեակները, Թարգմանչաց Վարժարանի դասարանները, հայոց Թաղի բնակարանները եւ շատ անգամ ալ ժառանգաւորաց դաշտի մէջ լարուած յատուկ վրանները:

Համ ու հոտ կար վանքին մէջ, չըսելու համար եռուզեռ: Հայութիւն կը բուրէր ամէն կողմ: Կեանքը կը խայտար վանքի Մեծ Բակին մէջ:

Ուխտաւորներէն մի քանին հետերնին կը բերէին Հալէպի «արդար իւղ« կամ ճերմակ պանիր, ու վանքին մէջ կը փորձէին ծախել տեղացի հայերուն, իրենց ուխտագնացութեան ծախսերը հոգալու համար:

Իսկ ճարպիկ այր մարդիկ վանքին դուռը, կովերուն պարտէզի մուտքին «մանղալ» մը վառելով, ոչխարի միսով կամ ճիկէրով խորոված կը սարքէին, ու սանտուիչներ պատրաստելով կը ծախէին երեկոյեան ժամերուն:

- Հէմ գիարաթ, հէմ թիճէրէթ... - կը պոռային վանքի լաճերը, ի տես ուխտագնախառն այս վաճառականութեան:

Ի տարբերութիւն այս ուխտաւորներուն, սըմսարը եկած էր յատուկ առաքելութեամբ, հարսնացու հայ աղջիկ մը փնտռելու պաղտատցի հայ տղու մը համար: Առաքելութիւն մը, որ հարկ էր յաջողութեամբ պսակել, որովհետեւ նոր յաճախորդներ կը սպասէին իրեն:

- Այս գիշեր, վանք պիտի երթանք Սրբուկ հանըմենց տունը, - ըսաւ հայրս, պատուիրելով մեզ, որ տունը խելօք կենայինք եւ չարութիւն չընէինք: Անդրանիկ զաւակը ըլլալուս համար, հօրս սլաքները աւելի ուղղուած էին ինծի, քան եղբայրներուս եւ քոյրերուս:

Հայրս, հազուադէպ վանք կ'երթար, զարմանք պատճառելով ինծի... մանկունակ այդ տարիքիս ակամայ հարց տուի...

- Ինչո՞ւ վանք կ'երթանք...

- Սըմսարը պիտի տեսնենք - պատասխանեց կարճ ու կտրուկ:

- Սըմսարը ո՞վ է - հարց տուի զարմացած:

- Մեծնաս նէ կը հասկնաս:

Ու հարցը այդպէս ալ փակուեցաւ:

Սակայն այդքան ալ մեծնալու հարկ չեղաւ, որ վերջապէս իմանայի կամ հասկնայի թէ ո՞վ էր այս սըմսար ըսուածը:

Քանի մը օրէն, լուրը կայծակնային արագութեամբ տարածուեցաւ վանքին մէջ, թէ Սրբուկ հանըմին աղջիկը շուտով հարս պիտի երթար Պաղտատ:

- Քա՛ լսեցի՞ր աղջկան դպրոցէն հաներ են ու շուտով պիտի ամուսնացնեն:

- Աչքդ չելլէ, առանց տղային տեսնելու... հաւնելու, աղջի՞կ կը տրուի...

- Քա՛ տղան Պաղտատէն է եղեր, դրամ ունին, մեծ ընտանիք են...

- Կ'երեւի թէ Սրբուկ հանըմը այս սըմսարին հետ սկիզբէն խօսած է, որ աղջկան յարմար փեսացու մը գտնէ:

- Այդ կնիկէն ամէն բան կրնաս յուսալ:

Ու այսպէս շաբաթներով «զաւաթ մը սուրճ խմելու եկայ...« ըսող կիներուն, օրուան հրատապ նիւթը՝ Սրբուկ հանըմին աղջկան ամուսնութիւնն էր, որուն հեղինակը՝ Պաղտատի սըմսարն էր:

- Ամա՜ն, թող խէրով բարով հարս ըլլայ երթայ, կը նայիս մեր վանքի աղջիկներուն ալ բախտը կը բացուի Պաղտատ, - դէմը ելլողին կ'ըսէր Սուրբիկ հանըմ, մխիթարելով ինզի՞նք... թէ դիմացիններուն, որոնք տունը հարսնցու աղջիկ ունէին:

Ու յանկարծ, սըմսարը անյայտացաւ վանքէն, ամիս մը ետք իր ցանած սերմերուն պտուղը քաղելու համար:

Կէսօր էր: Մեր տան բակը նստած կը ճաշէինք, երբ յանկարծ տան դուռը զարնուեցաւ:

- Պատուհանէն նայիր ո՞վ է դուռը զարնողը - ըսաւ հայրս, քիչ մը սրտնեղած, քանզի եկողը կը խանգարէր կէսօրուան ճաշի հանգիստը:

- Սրբուկ հանըմն է - ըսի ու շտապեցի դուռը բանալու:

- Կէօզիւն այտըն, կնքահայր ճան, սէն պիզիմ կնքահայր օլտուունուզ իչին, սիզէ խապար վէրմէյէ կէլտիմ, քի պու աշխամ կէլէճէքլէր, ըըզ իստէմէյէ - ըսաւ Սուրբիկ հանըմ, մերժելով սեղան նստիլ մեզի հետ: (Աչքդ լոյս, կնքահայր ճան, քանի դուն մեր կնքահայրն ես, ձեզի լուր տալու եկայ, որ այս գիշեր աղջիկ ուզելու պիտի գան):

- Ինչո՞ւ այդքան կ'աճապարէք, նախ թող որ աղջիկը դպրոցը աւարտէ, վկայական մը առնէ, յետո՛յ կ'ամուսնացնէք - պատասխանեց հայրս:

- Պաղտատտան պուրայտա կէլտիլէր սէօզ քէսմէյէ... Նշան իչի կէլտիլէր: (Պաղտատէն հոս խօսք կապի եկած են, նշանտուքի համար եկան):

- Աղջիկդ տղուն չտեսած, ի՞նչպէս պիտի նշանտուք ընես:

- Կնքահայր ճան, օղլանըն թաֆսիրի կէօրտիւք կիւզէլ տըր: (Կնքահայր ճան, տղուն նկարը տեսանք, գեղեցիկ էր):

- Աղջիկդ տղուն չտեսած, չհաւնած, ի՞նչպէս կը համաձայնիս:

- Նէ օլաճաք, պէն քօճամը քիլլիսէտէ կէօրտիւմ, թանըշտըմ: (Ի՞նչ պիտի ըլլայ, ես ամուսինս եկեղեցիին մէջ տեսայ ճանչցայ):

Հայրս որ լաւ կը ճանչնար Եղեռնէն ճողոպրած ու «մանկութիւն չտեսած« Սուրբիկ հանըմին ընտանիքը, որոնց զաւակներուն կնքահայր էր եղած, չուզեց առարկել, ու խոստացաւ ներկայ ըլլալ գիշերուան խօսք կապի արարողութեան:

Համաձայնութիւնը կնքուած էր:

Այդ գիշեր հեռաւոր փեսացուին լուսանկարը ձեռքէ ձեռք անցած էր: Երիտասարդ թուխ տղայ մը, իրաքեան սպայի զգեստով: Կենսագրութի՞ւնը..., զինուորական կրթութիւն ստանալով կը ծառայէր բանակին մէջ որպէս հաշուապահ: Ընտանիքին անդրանիկ զաւակն էր: Մէկ աստղանի սպայ ըլլալը իրաքեան բանակին մէջ, հաշուապահութեան պաշտօնով... կու տար վկայութիւնը ուշիմ երիտասարդի մը: Ու այդ վկայութիւնը բաւ եղաւ այն օրերուն հաւանութիւն տալու, ի հեճուկս հարսնցուին կարծիքին, որ 17 տարեկան հասակին, պատանեկան եւ երիտասարդկան կեանքի «խենթ» օրերը չվայելած, ակամայ կ'ենթարկուէր այնպիսի որոշումներու, ուր ապագան կը շղթայուէր անորոշութեան, ու այդ ալ օտար երկինքի մը տակ:

Խօսք կապի արարողութենէն ետք, սըմսարի առաջարկով քանի մը օրէն պիտի կատարուէր նշանտուքի հանդիսաւոր արարողութիւնը, նախագահութեամբ ընտանիքին մօտիկ սրբազանի մը եւ մի քանի վարդապետներու:

Այդպէս ալ եղաւ: Նշանտուքը տեղի ունեցաւ Սրբուկ հանըմի տան մէջ, որ մէկ սենեակ մըն էր, վանքի մեծ բակին մէջ բացուած: Սենեակ մը, որ այն օրերուն կը ծառայէր որպէս հիւրանոց, ճաշասենեակ, ննջասենեակ, որուն մէկ անկիւնը սահմանուած էր խոհանոցի: Եղեռնէն ճողոպրած գաղթականներու տուները այդպէս էին այն օրերուն:

Նշանտուքին հրաւիրուած էինք հանդերձ ընտանեօք: Չեմ գիտեր ինչպէս այդ սենեակին մէջ 25-30 հոգի տեղաւորուեցանք:

Հօրս փափաքով, այս անսովոր ամուսնութեան կնքահայրութիւնը վիճակուեցաւ ինծի: Պարտականութիւն մը, որ 11 տարեկան հասակիս, հարսնացուին նման, առանց ըմբռնելու կատարուած իրողութիւնը, կ'ենթարկէր գլխս ծնողական որոշումին:

Հայրս, Պիղատոսին նման ձեռքե՞րը կը լուար այս անսովոր ամուսնութենէն, թէ աղջկան անորոշ ապագային պատճառ չըլլալու համար, կնքահայրութեան ջահը կը փոխանցէր զաւկին: Չեմ գիտեր:

Նշանտուքի արարողութիւնը կայացաւ առանց փեսայի: Հարսնցուն կանգնած էր փոքր սեղանի մը առջեւ, որուն վրայ զետեղուած էր փեսացուին լուսանկարը, ու կողքին՝ երկու լուսաւորուած մոմեր: Հարսնցուին կողքին կանգնած էի ես, որպէս կնքահայրը այս մօտալուտ ամուսնութեան:

Մեզի համար անսովոր այս նշանտուքէն երկու օր ետք, սըմսարը իր պարագաներուն հետ մեկնեցաւ Պաղտատ, երեք ամիսէն վերադառնալու պսակադրութեան համար:

Կնքահայր ըլլալու լրջութիւնը սորվեցայ հարսանիքի թափօրէն, երբ սըմսարը տոպրակ մը լեցուն յորդանանեան դրամ կը թափէր փեսային գլխուն վրայ:

Այն օրերուն... ո՞ր խենթը այնքան ափով դրամ կը թափէր: Մարդիկ չարաչար կ'աշխատէին իրենց օրուան հացը ապահովելու համար ու ահա պատեհ առիթը ներկայացաւ մեզի՝ փոքրերուս, փողոցէն դրամ հաւաքելու:

Փեսային քովէն քալելով, դրամները ոտքերուս առջեւ կ'իյնային: Ու պահ մը մոռնալով հարսանիքն ու առաջին արարի դերակատարութիւնս, սկսայ գետնէն դրամներ հաւաքել, մինչեւր որ ծանր ձեռք մը իջաւ վիզիս:

Հայրս էր, որ կը կշտամբէր անվայել կեցուածքիս համար, փեսան թողած... հիմա դրամ կը հաւաքէի ճամբաներէն:

Այս ի՜նչ լաւ սըմսար է եղեր, կը մտածէի դէպի եկեղեցի ճամբուս վրայ, յաջորդող շաբաթներուն դպրոցական գրօսանքի «քաղէքն ու ֆալաֆէլ«ի կամ պաղպաղակի մը ծախսը ապահոված ըլլալու դոհունակութեամբ:

Կնքահայրութեան լրջութեան առաջին դասն էր այս, ի՜նչ փոյթ... որ Եղեռնէն քառասունեւվեց տարի ետք՝ այն օրերու մտայնութեամբ, 17 տարեկան ուշիմ հայ աղջիկ մը, դպրոցէն հանելով, ծնողական պարտադրանքի տակ, լաց ու կոծով Երուսաղէմէն՝ Պաղտատ հարս պիտի ղրկէինք, որպէս արդիւնք՝ սըմսարի ուխտագնախառն վաճառականութեան առաջին գործընթացին:

Կէս դար անցեր է այսօր այս պատմութենէն, եւ այսօ՛ր որքա՜ն կը զգամ դերը ժամանակին... ըլլայ այդ արեւմուտքի մէջ թէ արեւելքի: Ժամանակին՝ որ կը փոխէ ամէն ինչ, կը յղկէ ամէն սխալ բան, փոխելով իսկ մարդոց բարքերն ու սովորութիւնները:

«Ժամանակը երբեք կանգ չառներ, կեանքը մշտապէս կը զարգանայ, կերպարանափոխելով մարդկային փոխյարաբերութիւնները իւրաքանչիւր յիսուն տարի« ըսած է գերմանացի գրող Կէօթէ: Ի՜նչ փոյթ, որ մեր մանկութեան տարիներուն, մանկութիւն չտեսած մեր «ծնողներուն խօսքը կամ որոշումը յարգելով« ճանչցանք «զուարճութիւնը« կեանքին, իր տխուր թէ ուրախ երեսնելով, թէկուզ եթէ ան «կնճիռ« ալ թողուց մեր մանուկ հոգւոյն վրայ:


## ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Avenue**
**Pasadena, CA 91107**

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

***ՅՈՎՍԷՓ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ***
***«ԼՈՅՍ»***

*«Եթէ հայկական հիւրասիրութեան պատկերի վրայ աւելցնենք պարզ ճաշակ, խիստ խնայողութիւն, զարմանալի կանոնաւորութեան ոգի, մեծ ընդունակութիւն առեւտրական գործերու մէջ, մենք նկարագրած կ'ըլլանք հայերու լաւ կողմերը»:*
*Գումբա, Թիֆլիսի մէջ ֆրանսացի հիւպատոս 1820թ.*

*«Այս մարդիկ հարստահարուած եւ բարձրատոհմ ազգի մը կրօնաւորներն են, ազգ, որ հրեաներու եւ յոյներու պէս տարագիր ու ստրուկ եղած է՝ առանց առաջիններու ինքնամեկուսացման եւ վերջիններու ստրկամտութեան: Այս ժողովուրդը հարստացած է առանց բանսարկութեան: Բայց անոր տեղը, այնուամենայնիւ, երկար ժամանակ եղած է «գերութեան տուն»-ի մէջ, որ վերջերս բազմապատկած է իր անթիւ օթեւանները: Թերեւս դժուար է գտնել ազգի մը տարեգրութիւնը, որ աւելի զերծ ըլլայ արատաւոր ոճիրներէ, քան հայերունը, որոնց առաքինութիւնները խաղաղասիրութեան արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետեւանք: Սակայն ինչպիսին ալ ըլլայ անոնց ճակատագիրը, որ շատ ծանր եղած է, ինչպիսին ալ ըլլայ ապագային, անոնց երկիրը յաւէտ պիտի մնայ աշխարհի ամենահետաքրքիր երկիրներէն մէկը, եւ թերեւս անոնց լեզուն միայն աւելի խոր ուսումնասիրութեան պահանջ կը դնէ՝ աւելի գրաւիչ դառնալու համար:*

*Եթէ վստահինք Ս. Գիրքին, դրախտը Հայաստանի մէջ էր, Հայաստան, որ իր հողի վաղանցուկ աւընչակցութեան պատճառով Ադամի սերունդներու պէս սուղ վճարեց մարդու մը երջանկութեան դիմաց, որ իր փոշիէն ստեղծուած էր: Հայաստանի մէջ էր, որ Ջրհեղեղը սկսաւ տեղի տալ, եւ իջաւ աղաւնին: Բայց դրախտը դեռ չէր հասցուցած հեռանալ, երբ ծայր առաւ այդ երկրի տարաբախտութիւնը, քանի որ երկար ժամանակ հզօր թագաւորութիւն ըլլալով հանդերձ, համարեայ երբեք անկախ չեղաւ, եւ պարսից սատրապները, եւ թուրք փաշաները իրարու նման անապատ դարձուցին այն երկիրը, ուր Աստուած մարդը ստեղծած էր իր իսկ պատկերով»:*
*Ճորճ Պայրըն (1788-1824), անգլիացի. բանաստեղծ*

*«Ահա երկու առարկայ, որոնք արժանի են աւելի մեծ ուշադրութեան եւ աւելի մանրամասն հետազօտութեան. նախ այն նմանութիւնը եւ ըստ երեւոյթին նաեւ աջակցութիւնը, որ կ'երեւի օսերու սովորութիւններուն ու կենցաղավարութեան եւ հին գերմանացիներու միջեւ եւ ապա՝ այն ծանրակշիռ դիրքը, որ ներկայիս կը տիրէ հայոց ազգին մէջ: Բոլոր նշաններէն կ'երեւի, որ իսկապէս այս ազգը աստուածային տեսչութեամբ ընտրուած է իբրեւ միջնորդ քրիստոնէութիւնը եւ քաղաքակրթութիւնը տարածելու Արեւելքի մէջ: Կասկած չկայ, որ մեծ պատմական, համաշխարհային նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ այս քրիստոնեայ ժողովուրդը ցրուած է մեծ տարածութեան վրայ, Մարոքոյէն սկսած մինչեւ Ջինաստան եւ միեւնոյն ժամանակ անոր բոլոր անդամները կապուած են միմեանց հետ՝ հասարակական, քաղաքական ու կրօնական կապերով եւ ազգային մէկ միութիւն կազմած»:*
*Աւգուստուս Հաքստհաուզէն (1792-1866), պրուսացի ազգագրագէտ*

*«... Հայու դիմագիծերը պարսիկներու նման զարմանալի համաչափ են. աչքերը շատ գեղեցիկ են, հայեացքը, որ բնորոշ է միայն անոր, կը պարունակէ միաժամանակ՝ խելամտութիւն, վեհանձնութիւն, թախիծ կամ հնազանդութիւն, երբեմն թէ՛ մէկը, թէ՛ միւսը:*

*Հայը պահպանած է նահապետական բարքերը: Անոր համար Աբրահամը իր մահկանացուն կնքած է երէկ, իսկ Յակոբը դեռ ողջ է: Հայրը ընտանիքի անվիճելի ղեկավարն է, իրմէ յետոյ իշխանութիւնը կը պատկանի աւագ որդիին, կրտսեր եղբայրները անոր սպասաւորներն են... Բոլորը անվերապահօրէն կ'ենթարկուին հօր անվիճելի եւ անողոք կամքին: Անոնք հազուադէպ կը նստին իրենց հօր ներկայութեամբ. այդ կատարելու համար անհրաժեշտ է ոչ թէ հօր հրաւէրը, այլ հրամանը: Եթէ հայուն տունը կու գայ երաշխաւորուած նոր անձ մը կամ յարգանքի արժանի հիւր մը, այդ օճախին մէջ կը սկսի տօնախմբութիւն. կը մորթեն ոչ թէ հորթ, այլ գառնուկ, կը վառեն բաղնիքը եւ բոլոր բարեկամները կը հրաւիրեն խնճոյքի...:*

*Այդպիսին է հայկական կենցաղի արտաքին կողմը՝ ընդգծուած տնտեսավարութեան հետ զարմանալի հակում ունին դէպի կարգ ու կանոնը եւ մեծ խելահասութիւն առեւտրական գործերու մէջ:*

*... Հայուն խօսքը համարեայ միշտ ճիշդ է, անոր գործի վերաբերող ստորագրութիւնը գրեթէ սուրբ է»:*
*Ալեքսանդր Տիւմա (Հայր) (1802-1870), ֆրանսացի գրող*

*«Ձեր հնամենի լեզուն ես չեմ գիտեր, բայց կը սիրեմ զայն: Անոր մէջ Արեւելքը կը զգամ, դարերը կը նշմարեմ այնտեղ, կը տեսնեմ անցեալի խորհրդաւոր նշոյլի շողարձակումը: Ինծի համար պարծանք է թարգմանուիլ հայերէնով»:*
*Վիքթոր Հիւկօ (1802-1885), ֆրանսացի գրող*

*«Հայաստանը մարդկային քաղաքակրթութեան հնագոյն հայրենիքն է»:*
*Ալեքսանտր Հիւմպոլտ (1769-1859), գերմանացի բնախոյզ, ճանապարհորդ*

*«Աշխարհի երեսին հայերու թիւը կարելի է երեք միլիոն նկատել: Կէսէն աւելին կը բնակին Տաճկաստանի մէջ: Շատեր կ'ապրին Ռուսաստանի մէջ, մանաւանդ Վրաստանի տարբեր նահանգները, շատ հայեր կան նոյնպէս Պարսկաստանի մէջ... ամէն տեղ ուր որ կը գտնուին անոնք, կը նկատուին ճարպիկ եւ բանիմաց. բոլորը համաձայն են եւ կը խոստովանին, որ անոնք հասարակ խելքի տէր մարդիկ չեն:*

*Տաճկաստանի մէջ անոնք աւելի բարձր հանդիսացած են (քան շրջակայ ազգութիւնները) իրենց առեւտրական գործունէութեամբ եւ այլ ընդունակութիւններով, որ ունին դէպի մեքենական արհեստները: Գլխաւոր վաճառականները հայերն են, ինչպէս բոլոր մեծ սե- ղանաւորները, եւ դուք կրնաք համոզուած ըլլալ, որ զանոնք կը գտնէք ամէն մէկ ձեռնարկութեան եւ գործին պարագլուխը, որ մասնագիտական պատրաստութիւն կը պահանջէ:*

*Անոնք ունին տաճիկի հաստատամտութիւնը, անոնք ունին յոյնի նուրբ եւ թափանցիկ միտքը՝ առանց անոնց թեթեւամտութեան. մէկ խօսքով՝ անոնք Արեւելքի անգ- լոսաքսոններն են»:*
*Տուայթ, 19-րդ դար, Թուրքիոյ մէջ ամերիկացի միսիոներ*

*«Հայերը շուտ նեղուող են եւ տաքարիւն, բայց քէն չեն պահեր եւ շատ խաղաղասէր, վեհանձն են, յարձակող չեն, օժտուած են յամառութեամբ, երբեմն ալ կամակոր են»:*
*Սերգէյ Գլինկա (1775-1847), ռուս պատմաբան*

*«Հայերը քրիստոնէական քաղաքակրթութեան հնագոյն ժողովուրդներէն մէկն են եւ երկրագունդի վրայ ամենախաղաղ, ձեռներէց եւ խելացի ազգերէն մին«:*
*Իվան Շոպէն (1798-1870), ռուս պատմաբան, ազգագրագէտ*

*«Հայաստանի մէջ թուրքական անիրաւութիւններու ամենայուզիչ եւ սրտաճմլիկ նկարագրութիւնը շատ աւելի թոյլ է սարսափելի իրականութիւնէն: Փաստերը յաճախ այնպիսի զայրացնող պատկեր ունին, որ միայն Yaonբ զգացումները վիրաւորելու կամ ընթերցողներու կասկածը յարուցանելու վախն է, որ կ'արգիլէ անոնց իրական պատկերը հրապարակ հանել»:*
*Էմիլ Տիլոն (1854-1933), իռլանտացի գիտնական, լրագրող*

*«Եւ սակայն եթէ Գերմանական կայսրութեան եւ Թուրքիոյ միջեւ եղող սերտ յարաբերութիւնները չըլլային, ամենամեծ պաշտօնական ոճիրը, որ դարերով գործուած է, չէր կատարուեր: Այս պատճառով Գերմանիոյ մէջ նախ եւ առաջ պէտք է ստեղծել հայանպաստ կարծիք: Հին իռլանտական հռչակաւոր առասպելի մը մէջ կին մը իր սպաննուած ամուսինին արիւնաթաթախ վերարկուն կը նետէ ազգականի մը ուսերուն վրայ, որ չէր ուզած պաշտպանել իր դատը, որպէսզի այդպիսով վրիժառութեան դրդէ զինք:*

*Մեզմէ ոչ ոք մտադիր է վրիժառու ըլլալու: Սակայն, եթէ կարելի ըլլար հայկական զոհերու արիւնոտ վերարկուն ձգել գերմանացի ժողովուրդի ուսերուն վրայ, որպէսզի ան ստիպուի իր կառավարութեան օգնութիւնը բերելու այս փառաւոր ազգին ողջ մնացածներու ապահովութիւնը եւ ազատութիւնը իրականացնելու, այդ իսկապէս կ'ըլլար հրաշալի գործ մը:*

*... Հայ ժողովուրդը միշտապէս եւ ամենուրեք հանդիսացած է օգտակար, բեղուն եւ ստեղծագործող տարր»:*
*Գէորգ Պրանտես (1842-1924), դանիացի գրաքննադատ*

*«Հայ ժողովուրդը կը կազմէ այն մեծ հարցի միջուկը, որ կը կոչուի Արեւելեան հարց, որ նորէն պիտի զբաղեցնէ քաղաքակիրթ ժողովուրդները, պիտի խռովէ արեւմտեան ազգերու խաղաղութիւնը, գժտութիւն պիտի ձգէ անոնց մէջ եւ այսպէս պիտի ուշացնէ քաղաքակրթութեան յառաջընթացը»:*
*Էտուար Պեռնշտայն (1850-1932), գերմանացի քաղաքական գործիչ*

*«Այս ժողովուրդի պատմութեան ընթացքին միշտապէս գեղեցիկ ու ողբերգական տարեգրութեան մէջ ոչ մէկը այնքան կենդանի շահագրգռութիւն կը ներկայացնէ, որքան Խաչակիրներու արշաւանքներու շրջանին հայ ազգին գործունէութիւնը:*

*Այդ շրջանին էր, որ հայ քաջարի վեհապետները, Սուրբ Երկրի ֆրանք իշխաններու հետ քով քովի պայքարեցան ի նպաստ անդրծովեայ քրիստոնէութեան ընդհանուր շահերուն»:*
*Կիւսթաւ Շլիւմպերժէ (1844-1929), ֆրանսացի արեւելագէտ*

*«Հայը ճարտարագործ, չարքաշ եւ յարատեւող ցեղ է, գիտութիւններ ուսումնասիրելու եւ կիրառելու ընդունակ, ինչպէս նաեւ գրական ու երեւակայական կարողութիւններով օժտուած. իբրեւ սեղանաւոր եւ վաճառական կը մրցին բուռն կերպով:*

*Լեռնոտ գաւառներու մէջ բYակուող հայերը ունին կտրիճ ու կարգապահ զինուորներ ըլլալու ընդունակութիւն:*

*Անոնք բիւզանդական բանակներուն մէջ պատուաւոր տեղ կը գրաւէին իրենց ռազմիկներով եւ զօրականներով. նոյնիսկ հայ կայսրեր բազմած են Կ. Պոլսոյ գահին վրայ:*

*Մեր օրերուն, 1895-ին, Զէյթունի մէջ եւ Ջարդերէն յետոյ քանի մը գիւղերու մէջ հայերը դիւցազնաբար պաշտպանած են իրենց զիրենք եւ աւելին պիտի ընէին, եթէ Թուրքերը նախապէս որեւէ պատրուակով հաւաքած չըլլային անոնց զէնքերը»:*
*Լիւթվիք Տը Գոնդանսըն, 20-րդ դար, ֆրանսացի գիտնական առեւտուր, արհեստ կամ պետական ծառայութիւն, հայերը մրցակից չունին»:*
*Հէնրի Լինչ (1862-1913), անգլիացի դիւանագէտ-աշխարհագրագէտ*

*«Երկունքի դարերու ընթացքին ի՞նչ եղած է հայերու դիրքը:*

*Եղած է արժանաւոր եւ դիւցազնական: Արժանաւոր, որովհետեւ հայ ժողովուրդը՝ հակառակ իր ծով դժբախտութիւններուն, ամուր կերպով կառչած մնաց իր հաւատքին, իր լեզուին, իր սովորութիւններուն եւ իր ազգային աւանդութիւններուն:*

*Դիւցազնական, որովհետեւ Հայաստանը չգոհացաւ արցունք թափելով, այլ բազմաթիւ պարագաներու մէջ վիրաւորուած զգալով իր ամենաթանկագին զգացումներուն մէջ, զէնք վերցուց եւ արեան գինով հատուցեց իր հոգիին ըմբոստութիւնը»: Ժագ Տը Մորկան (1857-1924), ֆրանսացի պատ-*

*Շար.ը էջ 19*

# ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԴԱԳԱՂԸ ԵՐԿՅԱՐԿԱՆԻ ՉԷ ԵՂԱԾ

*Շարունակուած էջ 13–էն*

*Խանջեանի շնորհիւ» վերտառութեամբ յօդուածով մը:*

*Այս յօդուածին եւ նիւթին մասին եւս մի քանի նշումներով ամբողջացուցած պիտի ըլլամ սոյն գրութիւնս:*

*Անմիջապէս ըսեմ որ, Խաչիկ Բաղիկեան իր յօդուածին առաջին պարբերութեան մէջ կ'ըսէ.*

*«Սողոմոն Գէորգի Սողոմոնեանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկի ձեռամբ 1895 թ. Փետրուար 26ին ձեռնադրւում է վարդապետ՝ անուանակոչուելով 7րդ դարի կաթողիկոս, շնորհալի բանաստեղծ, անուանի գիտնական ու հրաշալի ձայն ունեցող Կոմիտասի անունով»:*

*1895ի Փետրուար 26ին, Կոմիտաս վարդապետ, Վաղարշապատի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ ոչ թէ Խրիմեան Հայրիկի կողմէ կը ձեռնադրուի վարդապետ, այլ՝ Մեսրոպ Արք. Սմբատեանի: Իսկ, Կոմիտաս անունը ոչ թէ այդ օրը կը ստանայ, այլ՝ արդէն ստացած էր 1894ի Սեպտեմբեր 11ին կուսակրօն քահանայ (աբեղայ) ձեռնադրութեան ժամանակ: Այո Խրիմեան Հայրիկի փափաքով, բայց ոչ անոր ձեռամբ:*

*Քիչ մը անդին, Խաչիկ Բաղիկեանի գրութեան մէջ կը կարդանք.*

*«(Կոմիտաս վարդապետի) դագաղը Հոկտեմբեր 27ին դրւում է Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու մուտքի առաջ, կատարւում է հոգեհանգստի չքեղ արարողութիւն»:*

*Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ մուտքին առաջ չէ կատարուած «հոգեհանգստի չքեղ արարողութիւն»:*

*Կոմիտաս վարդապետ օծեալ կրօնաւոր մըն էր:*

*Հայց. Եկեղեցին կրօնաւորներուն համար կարգ Թաղման հոգեւորականաց անունով յատուկ արարողական կարգ մը ունի, եւ ըստ այս կարգին կատարուեցաւ հանգուցեալ վարդապետին Թաղման արարողութիւնը Հոկտեմբեր 27ին:*

*Թաղման կարգի այս արարողութիւնը ոչ եկեղեցիէն դուրս եւ ոչ ալ եկեղեցւոյ դրան առջեւ տեղի կ'ունենայ:*

*Ննջեցեալին դագաղը յատուկ աղօթքներով, սաղմոսներով, շարականներով եւ աւետարանական ընթերցումներով եկեղեցի բերուած եւ դէմքը դէպի արեւելք դարձած, ատեանին մէջ տեղաւորուած կ'ըլլայ:*

*Յատուկ պատարագ կը մատուցուի:*

*«Ողջոյնի պահուն պատարագը կ'ընդմիջուի Թաղման կարգի արարողութեամբ, դագաղը բեմ կը բարձրացուի, Ս. Միւռոնով կ'օծուի հանգուցեալին ճակատն ու աջը եւ Ս. Աւետարան մը կը դրուի անոր կուրծքին վրայ: Այնքան յուզիչ հրաժարական ողջոյնի երգեցողութենէն ետք, եկեղեցականները այդ օրուան ողջոյնը առնելով հանգուցեալին աջն ու Ս. Աւետարանը համբուրելով, կ'իջնեն բեմէն վար, պատարագը կը շարունակուի, յետոյ դագաղն ալ բեմէն վար կը բերուի եւ կը տեղաւորուի ատեանին մէջ:*

*Պատարագի վերջաւորութեան արարողութեամբ դագաղը կ'առաջնորդուի եկեղեցիէն դուրս:*

*Այսպիսով Թաղման կարգի եկեղեցւոյ բաժինը կ'աւարտի: Ասկէ անդին կը մնայ ննջեցեալը հողին յանձնելու եւ գերեզմանը կնքելու արարողութիւնը, որ Կոմիտաս վարդապետի պարագային, այս վերջին բաժինը վերապահուեցաւ Ս. Էջմիածնի մէջ, անոր միաբանութեան կողմէ կատարուելու համար:*

*Ուրեմն, միայն դամբանականները խօսելու համար, օրուան պատասխանատու մարմինը նկատի առնելով եկեղեցւոյ փոքր ըլլալու հանգամանքը, որոշած էր եկեղեցւոյ դրան առջեւ կատարել դամբանական ելոյթները:*

*Որպէս կենդանի վկայութիւն բերեմ այդ օրուայ Փարիզի ՀՕԿ-ի (քիչ յետոյ կը խօսիմ այս կազմակերպութեան մասին): Կեդրոնական վարչութեան վարիչ քարտուղար՝ Տօքթ. Հայկ Գալճեանի գրի առաջ յուշերէն, որոնք ցարդ ձեռագիր վիճակի մէջ կը մնան Հայաստանի Ազգային Արխիւին թիւ 449 ֆոնդին մէջ:*

*«Եկեղեցական արարողութեանց աւարտումէն յետոյ, դուրս հանուեցաւ դագաղը եւ զետեղուեցաւ եկեղեցիի դրան առջեւ, որպէսզի ժամերէ ի վեր սպասող ծովածաւալ բազմութիւնն ալ կարենայ մասնակից դառնալ այս հանդիսութիւններուն, որոնք պիտի սկսէին դամբանականներով:*

*Առաջին խօսողը եղաւ Պրն. Արշակ Չօպանեն «Կոմիտասեան Յնաձնախումբ«ին կողմէ: Յետոյ խօսք առին երկու օտար հիացողներ, մին՝ Ամետէ Կագդուէն, նախագահ Ֆրանսայի Երաժշտական Ընկերութեան, իսկ միւսը՝ Գուրդ Սաքս (Գերմանացի Միջազգային Երաժշտաբանական (միւզիքօլոժի) ընկերութեան կարկառուն դէմքերէն:*

*Մխիթարեան Միաբանութեան կողմէ խօսեցաւ Հայր Սահակ Վրդ. Տէր Մովսէսեան. եկեղեցիի վարչութեան կողմէ՝ Յ. Գալըպճեան, ՀՕԿ-ի կեդրոնական վարչութեան կողմէ՝ վարիչ քարտուղար Տօքթ. Հ. Գալճեան. Կոմոտասեան Սաներու կողմէ՝ խօսեցաւ Կոմիտասի աշակերտներէն Հ. Սէմէրճեան, Վասպուրականի Հայրենակցական Միութեան կողմէ՝ Տիգրան Ջիթունի, «Յառաջ« թերթի կողմէ՝ Շ. Միսաքեան, «Ապագայ» թերթի կողմէ՝ Հրաչ-Երուանդ, իսկ վերջին խօսող եղաւ վարդապետի ծննդավայրի՝ Քէօթահիոյ Հայրենակցական Միութեան ներկայացուցիչը՝ որուն անունը չեմ յիշեր»:*

*Շարունակենք կարդալ Խաչիկ Բաղիկեանի յօդուածը.*

*«Եւ ահա գալիս է յարմար առիթը՝ 1936 թ. Մայիսի 9ին Ֆրանսայի Հայաստան մշտական բնակութեան նպատակով ներգաղթող 1800 հայերով բեռնաւորուած շոգենաւը՝ Կոմիտասին խնամող յանձնաժողով նախագահ, փարիզաբնակ Դանուշ Շահվերդեանի ջանքերով ու հսկողութեամբ, Հայաստան է փոխադրւում նաեւ Կոմիտասի աճիւնը:*

*Դա իրականացւում է Հայաստանի Կենտկոմի քարտուղար, մեծ հայրենասէր, հայ ժողովրդի արժանի զաւակ, ծագումով վանեցի, Գէորգեան Ճեմարանում երկու տարի սովորած Աղասի Խանջեանի շնորհիւ»:*

*Հարկ է այստեղ յետադարձ ակնարկով մը խօսիլ Ֆրանսայէն Հայաստան ներգաղթի կազմակերպութեան մասին:*

*Ներգաղթի հիմնական կազմակերպութիւնը ամէն տեղ ՀՕԿ-ն էր եղած:*

*Բայց ո՞վ էր կամ ի՞նչ էր ՀՕԿ-ը: Հայաստանի առաջին հանրապետութեան տապալումէն յետոյ, 1921 Սեպտեմբեր 29ին Խորհրդային հայաստանին օգնութեան համար, Հայաստանի Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի Օգնութեան Կոմիտէ»էն, ՀՕԿ-ը, որուն Կեդրոնական Վարչութեան առաջին նախագահը ընտրուեցաւ Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեան:*

*Նոյն օրը Յովհաննէս Թումանեանի, Լէօի եւ Արամայիս Երզնկեանի ստորագրութիւններով ՀՕԿ-ի առաջին կոչը ուղղուեցաւ ամբողջ հայութեան Խորհրդային Հայաստանին օգնելու խնդրանքով: Ահա թէ ինչ կ'ըսուէր. «Աշխարհի ամէն կողմը ցրուած հայ ժողովուրդ, լսիր, քեզ է կանչում Հայաստանի Օգնութեան Կոմիտէն: Լսի՛ր քեզ կանչող հայրենիքի ձայնը եւ շտապիր օգնութեան ամէն բանով, ինչով կարող ես»:*

*(Շարունակելի 2)*

# ԹՈՒՐՔԻԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

*Շարունակուած էջ 5–էն*

*ուղղակի անցնում է վաղուց անպատկան մնացած, սակայն այսօր տեկտոնիկ դարձած հինաւուրց Հայաստանի «մահաղաշտերով»: Եթէ ապագան իմաստաւորուելու իրաւունք ունի, ապա ՆԱՏՕ-ին որեւէ անդամակցութիւն, աշխարհաքաղաքական որեւէ մեծամտութիւն կամ էլ չափաւոր իսլամական որեւէ ցուցադրականութիւն չեն կարող կանխել «ռենեսանսի» եւ «ռեալ-պոլիտիկի» վերջնական ներդաշնակութիւնը:*

**Րաֆֆի Յովհաննիսեանը խորհրդարանի անդամ է ու Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի հիմնադիր տնօրէնը:**

# ՇՆՈՐՀԱՆԴԷՍ ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆԻ

*Շարունակուած էջ 14–էն*

*դավառ մթնոլորտ մը ստեղծելով սրահին մէջ:*

*Ի վերջոյ, եկած էր օրուան ամենէն կարեւոր պահը: Խօսքը մեծարեալին էր: Պրն. Նագգաշեան նախ խորին շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր՝ իրեն տրուած այս բացառիկ շնորհանդէսին առթիւ, եւ ապա կազմակերպիչներուն՝ Տ. Վազգէն Քհնյ. Պոյաճեանին եւ իր տիկնոջ՝ Սօսիին, ինչպէս նաեւ բոլոր մասնակիցներուն: Պրն. Նագգաշեան մասնաւորաբար նշեց, որ սրտի անհուն գոհունակութիւն պատճառող օր մը ապրեցաւ, ի տես այս գեղեցիկ երեկոյթին, եւ պիտի շարունակէ իր գրիչը շարժել, այնքան ատեն որ իր ուժերը կը ներեն:*

*Հուսկ ապա, տեղի ունեցաւ գինեձօնի աւանդական արարողութիւն: Հանդիսավարը հրաւիրեց ներկայ եղող գաղութիս մտաւորականներէն Տօքթ. Ռիթա Գույումճեան, Հերման Օտապաշեան, Գէորգ Մանուկեան, որպէսզի միանան Սրբազան Հօր, Տէր. Վազգէնին եւ Տէր Կոմիտասին՝ կատարելու մեծարեալին «Խճանկար» գիրքին գինեձօնը: Ներկաները յոտնկայս ծափահարեցին եւ ապա շնորհաւորեցին պրն. Հայկ Նագգաշեանը:*

*Սոյն շնորհահանդէսը աւարտեցաւ Սրբազան Հօր փակման աղօթքով: Լաւալի Ս. Խաչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տ. Կոմիտաս Քհնյ. Միրզախանեանի սեղանի օրհնութենէն ետք, տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն մը, որուն ընթացքին մեծարեալին ձօնուած իր բանաստեղծութիւնը արտասանեց Ռ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ մեծարեալին բարեկամներէն՝ պրն. Գէորգ Մանուկեան: Մեծարեալին թոռնիկը՝ փոքրիկն Հայկ Նագգաշեան եւս անակնկալ մը մատուցեց ի պատիւ իր մեծ հօր՝ արտասանելով «Մայրենի Լեզուի» բանաստեղծութիւնը: Մտերմիկ եւ հաճելի մթնոլորտի մը մէջ ներկաները փոխանցեցին իրենց տպաւորութիւնները եւ ապա առիթը ունեցան նաեւ հեղինակին վաճառքի դրուած գիրքերէն մակագրուած օրինակներ ունենալու:*

*Վարձքդ կատար, գրիչդ դալար, սիրելի պրն. Հայկ Նագգաշեան:*


## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր
տրամադրութեան տակ
ունիք հայերէն
գիրքեր,
եւ կը ցանկանաք
զանոնք նուիրել
Կայծ
Երիտասարդական
Միութեան
գրադարանին՝
հաճեցէք կապ պահել
մեզի հետ:

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**



**INVITATION FOR BIDS**
**(IFB) NO. 1680**
**THE RE-ROOFING OF TEN (10)**
**BUILDINGS AT ESTRADA**
**COURTS**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the The Re-Roofing of Ten (10) buildings at Estrada Courts Housing Development located at 3232 Estrada Street, Los Angeles, CA 90023. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Technical questions may be directed to Project Manager, Juan Lopez at 213-252-4264. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd, 3rd floor, Los Angeles, CA 90057 until 2:30 p.m. (local time), January 6, 2010.**

12/10, 12/17/09
CNS-1747232#
MASSIS WEEKLY

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ՊԵՐՃ ՏԻՐԱՄԱՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Դեկտեմբեր, 2009ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի:*

*Հոգեճաշ պիտի մատուցուի Fresca ճաշարանին մէջ, Brand Blvd. Glendale:*

*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԱՐՏԱՇԷՍ ՊԱԼՊՈՒՋԱՔԵԱՆԻ մահուան առթիւ (Արժանթին), Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, մասնաւորաբար քրոջ՝ տէր եւ տիկ. Շնորհիկ եւ Ժոզէֆ Ժիրագոյին:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

*Այսու կու գամ խորին շնորհակալութիւն ներս յայտնելու բոլոր այն կազմակերպութիւններուն եւ անհատներուն որոնք անձամբ, ծաղկեպսակով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ, նամակով եւ կամ հեռաձայնով ցաւակից դարձան ամուսնոյս ՍԱՄՈՒԷԼ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ մահուան առթիւ, ջանալով մեղմացնել մեր մեծ վիշտը:*

*ՍԱՌԱ ՍԱՂՐԵԱՆ*

*ՍԱՄՈՒԷԼ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ Հայ Որբերու եւ Տարեցներու Ֆոնտին եղան են հետեւեալ նուիրատուութիւնները*

| | |
|---|---|
| Ագոյեան ընտանիք | $300 |
| Ֆէլիքս, Լուիզա եւ Վարդուհի Սմբատեան | $150 |
| Յարութիւն Մովսէսեան | $150 |
| Տէյվիտ Սաղրեան | $150 |
| Տիկ. Ատրինէ Սաղրեան | $100 |
| Վեր. եւ Տիկ. Ժան եւ Ժանէթ Մելքոնեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գեղամ եւ Լալիք Թոքաթլեան | $100 |
| Տիկ. Թագուհի Վարդանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճօ եւ Փոլա Սաղրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Սոնիա Վարդանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Մինաս եւ Հուրի Ֆուրնուզեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդգէս եւ Ալիս Գուրույեան | $100 |
| Ռուբէն Իսահակեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Նորայր եւ Արմինէ Ղազարեան | $60 |
| Տիկ. Լուսին Փարիքեան | $50 |
| Տիկ. Անահիտ Պատր | $50 |
| Տէր եւ Տիկ. Ժորա եւ Մարգրիտ Միքայէլեան | $50 |
| Արա Պետրոսեան | $50 |
| Տօքթ. եւ Տիկ. Արա եւ Հերմինէ Յովհաննէսեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Կարապետ եւ Կարինէ Սահակեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Ռոզիկ Քրնապլեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Օննիկ եւ Էլմոն Գէորգեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վիքթոր եւ Նոյեմի Փոլատեան | $50 |
| Տիկ. Ազնիւ Սարգիսեան | $50 |
| Տիկ. Լիլիան Սաղրեան | $50 |
| Տիկ. Անահիտ Մարկոսեան | $50 |
| Տիկ. Մէյպըլ Պայրաքտարեան | $50 |
| Տիկ. Լորանս Երանոսեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Մարինէ Յարութիւնեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրէօղլեան | $50 |
| Տիկ. Ալիս Վարժապետեան | $40 |
| Տէր եւ Տիկ. Կարօ, Սիլվա եւ Յովսէփ Տէր Պետրոսեան | $40 |
| Տիկ. Շողիկ Ջաղացպանեան | $40 |

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՆՆԷՍԵԱՆ վերջերս հիւանդանոցային դարմանումներու ենթարկուած ըլլալով, այժմ կը բոլորէ իր կազդուրման շրջանը: Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք:*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*Քաղաքիս ծանօթ ազգայիններէն՝ ՆՈՒՊԱՐ ՄԽՍԻԳԷՈՐԳԵԱՆ շրջանէ մը ի վեր բժշկական դարմանումներու կ՚ենթարկուի: Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք իրեն:*

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

*Շարունակուած էջ 8-էն*

*մասին անդրադառնալը կարեւորում ենք ընդհանուր պատկերացում տալ, ըստ մասնագիտութեան 8 մասնախմբերի յատուկ առանձին նիստերում, քննարկուած, գիտաժողովի հիմնախնդիրների եւ լուծումների հետ առնչուած թեմաներով առարկաներին՝ թուենք հերթականութեամբ:*

*- Ֆիզիկայի եւ աստղագիտութեան ուսումնասիրութեան հիմնախնդիրները:*

*- Քիմիայի ուսուցման հիմնախնդիրները:*

*- Կենսաբանութեան ուսուցման հիմնախնդիրները:*

*- «Բնագիտութեան» ինտեգրացուած առարկայի դասաւորման առանձնայատկութիւնները:*

*- Ֆիզիկական աշխարհագրութեան դասաւանդման հիմնախնդիրները:*

*- Մաթեմատիկայի դերն բնագիտութեան ուսուցման գործընթացում:*

*- Կրթութեան (բնագիտական) ինֆորմատացման հիմնախնդիրները:*

*- Սովորողների էկոլոգիական կրթութեան եւ դաստիարակութեան հիմնահարցը:*

*Վերոյիշեալ առարկաները, արդէն հաստատում են II կրթական գիտաժողովի աշխատակարգի բովանդակութեան մակարդակը, միաժամանակ յիշեալ 8 թեմաների շուրջ, գիտաժողովում երկու օրուայ ժամանակամիջոցում, մասնախմբերի առանձին յատուկ նիստերում ներկայացուած 102 զեկոյցների ընթերցումն, քննարկումից ներկայացուած առաջարկութիւնների փաթեթը յանձնուեց գիտաժողովի գլխաւոր յանձնաժողովին:*

*Դա, մասնախմբերի կատարած համահայկական աշխատանքի գնահատականի ապացոյցն է: Այս յաջողութիւնում շնորհալի դեր ունի նաեւ 13 անդամներից բաղկացած աշխատանքային կոմիտէն, որի գլխաւոր ղեկավարն է ԵՊՀ-ի ՕՔՆՖ ամպիոնի վարիչ Կ. Աթայեանը եւ ԵՊՀ-ի ՕՔՆՖ դեկան, Լ. Շեկեանը:*

*Գիտաժողովի լիագումարի եզրափակիչ III նիստում յատկանշական էր մասնախմբերի ներկայացուցիչներին էին մասնախմբի նիստերում քննարկուեց թեմայի կապակցութեամբ առաջարկութիւնների ամփոփումի ընթերցումը:*

*Դա արդէն պատմական նշանակութիւն ունեցող յաջողութիւն էր համահայկական բնագիտութեան II կրթական գիտաժողովի հիմնախնդիրների եւ լուծման էական խնդիրների:*

*Գիտաժողովի նկարագրութիւնը աւարտել է առաջ ուզում եմ մատնանշել երկու կարեւոր խնդիրների շուրջ:*

*Առաջինը, անհրաժեշտ է, որ մասնախմբերի ներկայացուցած առաջարկութիւնները, փոխանակ առանձին, այլ ընդհանուր առաջարկութիւնները բանաձեւի վերածելով գիտաժողովի եզրափակիչ նիստում մասնակիցներին կարդացվէր եւ վաւերացուէր:*

*Երկրորդը, համահայկական II կրթական գիտաժողովին ուշագրաւ էր սփիւռքի ներկայացուցիչների բացակայութիւնը: Մեր կարծիքով սփիւռքի ներկայութիւնը կարեւոր տարողութիւն տալիս էր գիտաժողովին: Կը յուսանք, որ յառաջիկայ հաւաքից սփիւռքը եւս կ՚ունենայ լայն ծաւալով մասնակցութիւն:*

*Եզրափակիչ նիստում միաձայնութեամբ որոշուեց գիտաժողովի անուանակոչումը վերածել պաշտօնական կազմակերպութեան հետեւեալ բնութագրով: Համահայկական բնագիտութեան կրթական ընդհանուր հասարակական կազմակերպութիւն (ՀԿ): Դա արդէն գնահատելի եւ ընդունելի նախաձեռնութիւն էր:*

*Շնորհաւորում ենք սոյն գիտաժողովի կազմակերպիչներին ու աշխատակիցներին, նորանոր հաջողութեան մաղթանքներով:*

## ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

*Շարունակուած էջ 17-էն*

*մաբան, հնագէտ*

*«Երբ կազմաւորուած էր հայ գրականութիւնը, ժամանակակից Եւրոպայի մեծ ազգերէն ոչ մէկը կար. դեռեւս Ֆրանսայի մասին խօսք չկար, ոչ ալ Անգլիոյ:*

*Հայ ազգային գրական հեղինակութիւնները այնպիսի հնութիւն ունին, որ բազում դարերով կը գերազանցեն եւրոպական ազգերու մեծամասնութեան հեղինակութիւնները: Այն ժամանակ, երբ Ֆրանսա անունը գոյութիւն չունէր, Հայաստանը մեծ դեր խաղցած է պատմութեան մէջ, այն ժամանակաշրջանին, երբ ֆրանսերէնը դեռեւս չէր տարբերուեր լատիներէնէն, գոյութիւն ունէր հայերէն շատ կարեւոր գրականութիւն»:*

*Անթուան Մեյէ (1866-1936), ֆրանսացի լեզուաբան, հայագէտ*

*«Իտալական Վերածնունդի մեծ ճարտարապետները լարեցին իրենց ուժերը՝ ձգտելով կառուցել գմբէթը այնպէս, ինչպէս Հայաստանի մէջ, այսինքն տարածութեան միաւորը պսակող գագաթ: Այս նպատակին համապատասխան զարգացաւ Արեւմուտքի ճարտարապետութիւնը յաջորդ դարերուն եւ կը յարատեւէ մինչեւ մեր օրերը»:*

*Ժոզէֆ Ստրժիգովսկի (1862-1941), աւստրիացի արուեստի պատմաբան*

*«Հայ ժողովուրդը աչքի կ՚իյնայ՝ կենսասիրութեամբ, դիմացկունութեամբ, խիզախութեամբ, ճշմարտութեան հանդէպ իր վստահութեամբ ծիշդ այդ որակներու շնորհիւ ան մշտապէս յաղթող դուրս եկած է տարբեր փորձութիւններէ»:*

*Էմիլ Վերհառն (1855-1916), պելժիացի բանաստեղծ, թատերագիր*

*«Թերեւս անհաւատալի կը թուայ, եթէ ըսեմ, որ Հայաստանը Ասիոյ ամենանշանաւոր ակադեմիան եղած է: XI-XIII դարերուն Հայաստանը կրնար այս աշխարհամասի մեծագոյն մասի ուսուցիչը ըլլալ: Այդ ամբողջ ժամանակամիջոցին ան հարստացած է բոլոր գիտութիւններու մէջ հմուտ մարդոցմով՝ հռետորներ, քերականներ, փիլիսոփաներ, պատմագիրներ, աստղագէտներ, ինչպէս նաեւ ասորերէնին, արաբերէնին, պարսկերէնին, լատիներէնին գերազանց տիրապետող թարգմանիչներ»:*

*Վիլֆրոյա, ֆրանսացի գիտնական*



MISSION Wine & Spirits
EVERY DAY LOW PRICES
UNBEATABLE DEALS! HUGE SELECTION!
Grey Goose Vodka 22 99
Hennessy VS 21 99
Jose Cuervo Especial 9 99
Johnnie Walker Black Label 19 99
Russian Standard 1.75L 18 99
Hennessy XO 104 99
Hennessy VSOP 32 99
Patron Silver 29 99
Johnnie Walker Gold Label 44 99
Corzo Silver 31 99
Cazadores Reposado 19 99
Courvoisier VS 18 99
Bacardi Rum 8 99
Johnnie Walker Red Label 15 99
Dewar's 12 Year 17 99
Stoli Elit Vodka 41 99
El Massaya Arak 20 99
Dos Lunas Silver 19 99
Johnnie Walker Green Label 37 99
Don Julio 1942 77 99
Robert Cavalli Vodka 29 99
Touma Arak 15 99
Crown Royal Canadian Whisky 13 99
Tres Generaciones Silver 27 99
Grey Goose Vodka 1.75L 47 99
El Jimador Reposado or Blanco 14 99
Bacardi Rum 1.75L 15 99
Ciroc Vodka 16 99
Chivas Regal 12 Years 16 99
Johnnie Walker Black Label 1.75L 49 99
Johnnie Walker Blue Label 119 99
Ultimat Vodka 27 99
1800 Tequila Reposado 16 99
Ketel One Vodka 16 99
Courvoisier VSOP 24 99
1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday—Saturday
9 am - 8 pm
Please Visit Our Website:
http://www.missionliquor.com
825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday—Saturday
9 am - 8 pm
*This ad expires on 12/24/09 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CCs
All items are 750ml in size unless specified.